

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՀԵՐ ՍՈՒՐԵՆԻ ՔՈՒՄՈՒՆՑ

ԱՐՑԱԽ-ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Ժ. 02. 01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Թերեզա Սարգսի Շահվերդյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սերգո Արտուշի Հայրապետյան


Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աննա Հենրիկի Աբաջյան

Առաջատար կազմակերպություն՝ **Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026թ. մարտի 6-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:
Հասցե՝ 0015 Երևան, Գրիգոր Լուսավորչի 15

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 03.02.2026-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Բ. Գ. Թ., դոցենտ  **Ն. Մ. Սիմոնյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը

Ատենախոսությունը նվիրված է Արցախ-Սյունիքի բարբառային տարածքի բառապաշարի պատմական շերտերի ուսումնասիրությանը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է մի քանի գործոններով:

ա) Հայերենի բարբառների ուսումնասիրություններում հիմնականում անդրադարձ է կատարվել հնչյունական և ձևաբանական առանձնահատկություններին, մինչդեռ բառապաշարի համակարգային վերլուծությունը մնացել է հետին պլանում: Սույն աշխատանքով փորձ է արվում լրացնելու այդ բացը՝ կատարելով Արցախ-Սյունիքի բարբառների բառապաշարի՝ պատմական շրջանի շերտերի համալիր քննություն:

բ) Արցախ-Սյունիքի բարբառների բառապաշարում պահպանված նախահայերենի, վաղնջահայերենի և հին հայերենի բառային միավորների վերլուծությունը թույլ է տալիս նորովի գնահատել բառապաշարի բնիկհայերենյան շերտը, վերանայել որոշ բառերի՝ փոխառություն համարվելու տեսակետները և առաջադրել ստուգաբանական նոր վարկածներ:

գ) Վերջին տարիների իրադարձությունների, մասնավորապես Արցախի բռնի հայաթափման հետևանքով Արցախի բարբառային միավորները կանգնած են անվերադարձ կորստի վտանգի առջև: Այս պայմաններում բարբառային ժառանգության փաստագրումը, գիտական վերլուծությունն ու ամրագրումը դառնում են ոչ միայն լեզվաբանական, այլև ազգային-մշակութային հրատապ խնդիր: Մինչույն ժամանակ աշխատանքը նպատակ ունի հավասարակշռված մոտեցում ցուցաբերելու Սյունիքի և Արցախի բարբառների նկատմամբ՝ դրանք դիտարկելով որպես մեկ պատմալեզվական ամբողջություն՝ չնայած զարգացման որոշակի ինքնուրույն ուղիների:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը Արցախ-Սյունիք բարբառային տարածքի բառապաշարն է:

Հետազոտության առարկան Արցախ-Սյունիքի բարբառային տարածքի բառապաշարի պատմական շերտերի լեզվական առանձնահատկություններն են: Այն ներառում է բառապաշարի նախահայերենյան (հնդեվրոպական), վաղնջահայերենի, հին հայերենի (գրաբարյան) շերտերի համաժամանակյա և տարաժամանակյա քննությունը՝ բացահայտելով դրանց ձևափմաստային զարգացումները, բառակազմական առանձնահատկությունները և գործառական դրսևորումները: Հատուկ ուշադրություն է դարձվում բարբառային

տարածքում պահպանված հնաբանություններին, որոնք կարևոր նյութ են տրամադրում հայերենի բառապաշարի ծագումնաբանական վիճելի հարցերի լուծման և ընդհանուր հնդեվրոպական համատեքստում նրա տեղի ճշգրտման համար:

Ատենախոսության նպատակը

Ատենախոսության նպատակն է իրականացնել Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարի պատմական շերտերի համապարփակ և համակարգային վերլուծություն թեմատիկ խմբերում՝ պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ բացահայտելով նախահայերենյան, հին հայերենի և փոխառյալ բառաշերտերի ձևիմաստային դրսևորման օրինաչափությունները: Այն միտված է հաստատելու բարբառի՝ որպես լեզվական հնաբանությունների պահպանման առանցքային աղբյուրի դերն ու նշանակությունը, ինչպես նաև ճշգրտելու հայոց լեզվի բառապաշարի պատմական զարգացման ընդհանուր պատկերը: Այս նպատակադրումն իրագործվում է լեզվաբանական քննության փոխլրացնող սկզբունքների միջոցով. բարբառի համաժամանակյա վիճակը վերլուծվում է՝ հիմնվելով նրա տարաժամանակյա՝ պատմական խորքերի վրա:

Սույն հետազոտության նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

ա) Հավաքել, համակարգել և թեմատիկ դասակարգման ենթարկել Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառային նյութը:

բ) Կատարել բառաքննական-ստուգաբանական փորձեր, վերլուծություններ՝ տարբերակելով բնիկ և փոխառյալ շերտերը:

գ) Ուսումնասիրել բարբառում պահպանված բառերի ձևիմաստային և բառակազմական, ինչպես նաև ըստ նյութի պահանջի՝ հնչյունական և քերականական առանձնահատկությունները:

դ) Համեմատական քննություն կատարել՝ առանցքում ունենալով բարբառային բառը և համեմատության եզր ընտրելով հայերենի մյուս տարբերակների, անհրաժեշտության դեպքում՝ այլ լեզուների համապատասխանականները:

Ատենախոսության փաստական նյութը

Ատենախոսության փաստական նյութն են Արցախ-Սյունիք բարբառային տարածքից հավաքած լեզվական տվյալները, ինչպես նաև հայերենի բարբառներին և պատմական բառապաշարին վերաբերող բառարանագրական, ընդհանուր բարբառագիտական, ստուգաբանական, թեմատիկ-իմաստային և լեզվաոճական ուղղվածության բազմաթիվ աշխատություններ: Աղբյուր են ծառայել նաև հայոց հնագույն մատենագրական հուշարձանները, բանահյուսական տեքստերը, ինչպես

նաև գեղարվեստական գրականությունը: Հատուկ նշանակություն է տրվել Կարլ Դարլինգ Բաքի «A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages» (1988) և Գևորգ Զահուկյանի «Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան» (1987) հիմնարար աշխատություններին:

Ատենախոսության գիտական նորույթը

1. Հայ պատմական բարբառագիտության մեջ առաջին անգամ է իրականացվում Սյունիք-Արցախի բարբառային տարածքի պատմական բառապաշարի նման ընդգրկուն և համակարգված քննություն:

2. Առաջարկվում են մի շարք բառերի ստուգաբանության նոր լուծումներ-վարկածներ՝ ճշգրտելով, համալրելով կամ վիճարկելով նախկինում ընդունված տեսակետները:

3. Սյունիք-Արցախի բարբառախոս միջավայրից գիտական շրջանառության մեջ է դրվում նախկինում չուսումնասիրված կամ մասնակիորեն վերլուծված նոր ու հարուստ բարբառային նյութ:

4. Մշակվել է բառապաշարի պատմական շերտերի համեմատական-թեմատիկ տախտակ, կազմվել են վիճակագրական աղյուսակներ և դիագրամներ, որոնք նորույթ են պատմական բարբառագիտության բնագավառում:

5. Առաջարկվում են բարբառային բառերի ստուգաբանության տարբերակներ, որոնց մի մասը կատարվում է առաջին անգամ:

6. Պատմահամեմատական լեզվաբանության բնագավառում առաջին անգամ է փորձ արվում Սյունիք-Արցախի բարբառային տարածքի նախահայերենյան շերտի բառային տվյալները ներմուծել և համալրել հնդեվրոպական բառաֆոնդի հայերենյան շարքը:

Հետազոտության մեթոդները

Առաջադրված նպատակին հասնելու և խնդիրները լուծելու համար ատենախոսության մեջ կիրառվել են լեզվաբանական հետազոտության համալիր մեթոդներ, որոնք փոխլրացնում են միմյանց՝ ապահովելով բառապաշարի բազմակողմանի և խորքային քննություն:

Հետազոտության հիմնական մեթոդը *պարմահամեմատականն* է: Այն հնարավորություն է տվել բարբառային լեզվական փաստերը համեմատելու հնդեվրոպական նախաձևերի, հին հայերենի գրավոր վկայությունների և հայերենի մյուս տարբերակների, ինչպես նաև ցեղակից և ոչ ցեղակից (թյուրքական, սեմական) լեզուների տվյալների հետ՝ բացահայտելու բառերի ծագումնաբանական ակունքները, պատմական զարգացման փուլերը և դրանցում կատարված ձևափոխության փոփոխությունները: Այս մոտեցումն իրականացվել է եռեզր համեմատության սկզբունքով՝ վերլուծելով բարբառային տվյալները

համաժամանակյա, տարաժամանակյա և հնդեվրոպական համատեքստերում:

Նկարագրական մեթոդը կիրառվել է Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի համաժամանակյա վիճակը ներկայացնելու համար: Այն թույլ է տվել բացահայտել բարբառային բառերի լեզվական առանձնահատկությունները, դրանց գործառական դրսևորումները և դասակարգել դրանք ըստ բառիմաստային-թեմատիկ խմբերի: Այս մեթոդի շրջանակներում կազմվել են համեմատական տախտակներ և վիճակագրական աղյուսակներ, որոնք քանակական պատկեր են տալիս բառաշերտերի պահպանվածության մասին:

Համադրական-զուգահրտական մեթոդը օգտագործվել է ոչ միայն բնիկ և փոխառյալ բառաշերտերը զանազանելու, այլև բառարմատների ծագումնաբանական հատկանիշները ճշգրտելու նպատակով: Այն հնարավորություն է տվել Սյունիք-Արցախի բարբառային տվյալները համադրելու հայերենի մյուս բարբառների և գրական լեզվի, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, այլ լեզուների փաստերի հետ՝ բացահայտելու բառերի լեզվաաշխարհագրական տարածվածությունն ու դրանց միջբարբառային առնչությունները:

Բառաքննական-ստուգաբանական վերլուծության մեթոդը հնարավորություն է տվել խորամուխ լինելու առանձին բառերի պատմության մեջ, կատարելու ստուգաբանական փորձեր, ճշգրտելու ուսումնասիրվող բառերի հնչյունական և իմաստային հատկանիշները, առաջարկելու ստուգաբանական նոր վարկածներ և վերանայելու առկա տեսակետները:

Այս մեթոդների շնորհիվ հնարավոր է դարձել լուծել բառապաշարի արխիվի շերտի հետ կապված վիճելի հարցեր և ճշգրտել հայերենի բառերի ծագումնաբանական պատկերը բարբառային տարածքի բառապաշարի համատեքստում:

Հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմքը

Ատենախոսության տեսական-մեթոդաբանական հիմք են ծառայել հայագիտության և հնդեվրոպական լեզվաբանության հիմնարար աշխատությունները, մասնավորապես այնպիսիք, որոնք կապված են հայ բարբառագիտության զարգացման հետ և նվիրված են հայերենի բարբառների նկարագրությանը, տեսությանը և պատմությանը, ինչպես նաև հայերենի արմատական բառապաշարի ուսումնասիրությանը: Հնդեվրոպական լեզուների և հայերենի համար մշակված թեմատիկ դասակարգման սկզբունքները հիմք են ծառայել սույն աշխատանքի կառուցվածքի համար՝ որպես հնդեվրոպական բառապաշարի թեմատիկ-

իմաստային դասակարգման և պատմահամեմատական բառագիտության հայեցակարգային ու մեթոդաբանական ուղենիշ:

Այս աշխատություններն իրենց տեսական դրույթներով և մեթոդաբանական մոտեցումներով ապահովել են ատենախոսության գիտական հենքը՝ հնարավորություն տալով Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարը դիտարկելու ինչպես ընդհանուր հայերենի, այնպես էլ լայն՝ հնդեվրոպական համատեքստում:

Ատենախոսության կիրառական նշանակությունը

Աշխատանքի տեսական արդյունքները կարող են օգտակար լինել հայերենի պատմական բառագիտության, պատմահամեմատական լեզվաբանության, հայոց լեզվի պատմության և բարբառագիտության համար՝ հարստացնելով մեր պատկերացումները հայերենի պատմական զարգացման մասին: Գործնականում ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել.

1. Բառարանագրական աշխատանքներում՝ մասնավորապես Սյունիք-Արցախի բարբառների ստուգաբանական բառարանների կազմման համար:

2. Բուհական դասընթացներում՝ հայոց լեզվի պատմության, բարբառագիտության և համեմատական լեզվաբանության ուսումնական ծրագրերում:

3. Վտանգված լեզվական ժառանգության փաստագրման և պահպանման նպատակով, հատկապես Արցախի բարբառների առնչությամբ:

4. Միջգիտակարգային՝ էթնոլեզվաբանական և պատմամշակութային ուսումնասիրությունների համար՝ լրացնելով տարածաշրջանի պատմության և ազգագրության վերաբերյալ տեղեկությունները և պատկերացումները:

5. Հնդեվրոպական լեզուներին վերաբերող աշխատանքների, ինչպես նաև ստուգաբանական, բառաքննական բառարանների կազմման համար:

Ատենախոսության փորձաքննությունը

Ատենախոսության հիմնական դրույթները զեկուցվել են հանրապետական և միջազգային մի շարք գիտաժողովներում, քննարկվել են դասախոսություններով և բանախոսություններով, ինչպես նաև տարբեր ձևաչափի հաղորդումներով: Թեմայի շուրջ հրատարակվել են 70-ից ավելի գիտական հոդվածներ, այդ թվում՝ միջազգային հեղինակավոր ամսագրերում: Հետազոտության արդյունքները պարբերաբար հրապարակվում են նաև Սյունիքի հայագիտական հետազոտությունների

կենտրոնի www.syunik.net կայքէջում, որի հիմնադիր-տնօրենը ատենախոսության հեղինակն է:

Հետազոտության կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է *ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության, համառոտագրությունների և պայմանական նշանների ցանկերից:*

Ներածությունը ներկայացնում է ատենախոսության թեմայի արդիականությունը, նպատակները և խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, մեթոդաբանությունը, գիտական նորոյթը, տեսական և գործնական նշանակությունը, փորձաքննությունը և կառուցվածքը: Այն նաև սահմանում է աշխատանքում կիրառվող հիմնական հասկացությունները և տերմինները:

Առաջին գլխում քննվում են Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում պահպանված նախահայերենի (հնդեվրոպական) շերտի բառերը: Այստեղ ներկայացվում են բարբառային նյութի համեմատական-թեմատիկ տախտակները, վիճակագրական աղյուսակները, ինչպես նաև կատարվում են բառաքննական-ստուգաբանական վերլուծություններ:

Երկրորդ գլխի նվիրված է վաղնջահայերենի և հին հայերենի բառաշերտերի, այդ թվում փոխառությունների վերլուծությանը՝ ըստ դրանց ծագման աղբյուրների: Միջինհայերենյան բառաշերտը՝ որպես պատմական բառապաշարի միջփուլային մաս, այստեղ առանձնակի քննված չէ, սակայն նշված շրջափուլի՝ բարբառային տարածքի լեզվական նյութին զուգադրվող բոլոր իրողությունները, հնարավորության սահմաններում և նյութի պահանջով, տեղ են գտել այս աշխատանքում և հեղինակի տարբեր հրապարակումներում:

Եզրակացությունները ամփոփում են հետազոտության հիմնական արդյունքներն ու դրույթները՝ ընդգծելով ատենախոսության գիտական ներդրումները և հետագա ուսումնասիրությունների հեռանկարները:

Ատենախոսությանը կցվում են նաև **օգտագործված գրականության, համառոտագրությունների և պայմանական նշանների ցանկերը:** Ատենախոսության ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքի 400 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածությունը ներկայացնում է Սյունիք-Արցախի բարբառային տարածքի պատմաաշխարհագրական և լեզվական առանձնահատկությունները, ինչպես նաև հայ պատմական բարբառագիտության հիմնական փուլերը: Այն մանրամասնորեն անդրադառնում է թեմայի վերաբերյալ առկա գրականությանը,

հիմնավորում է ատենախոսության վերնագրի ընտրությունը և հստակեցնում աշխատանքում կիրառվող առանցքային հասկացությունների ու տերմինների սահմանումները:

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱՀԱՅԵՐԵՆԻ ՇԵՐՏԻ ԲԱՌԵՐԸ ԱՐՑԱԽ-ՍՅՈՒՆԻՔԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

Առաջին գլուխը նվիրված է Արցախ-Սյունիք բարբառային տարածքի բառապաշարում պահպանված նախահայերենի (հնդեվրոպական) շերտի բառերի թեմատիկ քննությանը: Ցույց է տրվում, որ Արցախ-Սյունիքի բարբառները հայերենի բնիկ բառաֆոնդի պահպանման և վերականգնման կարևորագույն օջախներից են: Հետազոտությունը հիմնված է Կ. Բաքի և Գ. Ջահուկյանի կողմից մշակված թեմատիկ դասակարգման սկզբունքի վրա, ըստ որի՝ բառերն ուսումնասիրվում են բառիմաստային 23 խմբերի համատեքստում: Ներկայացվում են բարբառային նյութի համեմատական տախտակներ, վիճակագրական աղյուսակներ, որոնք քանակական պատկեր են տալիս հնդեվրոպական ծագման բառերի պահպանվածության աստիճանի մասին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում բառաքննական-ստուգաբանական փորձերին, որոնց միջոցով վերանայվում են նախկինում ընդունված տեսակետները, առաջարկվում են նոր վարկածներ և լուծվում բառապաշարի արխաիկ շերտի հետ կապված վիճելի հարցեր: Գլուխն ընդգծում է բարբառի՝ որպես բնիկ տարածքում անխզելիորեն գոյատևած լեզվական համակարգի դերը՝ երևան հանելով հայկական հնագույն կենցաղի, մշակույթի և լեզվական պատկերի առանձնահատկությունները:

1.1. «Ֆիզիկական աշխարհ» ենթագլխում քննվում են Արցախ-Սյունիք բարբառային տարածքի բառապաշարում «Ֆիզիկական աշխարհ»-ին վերաբերող բառերը, որոնք ունեն նախահայերենյան (հնդեվրոպական) ծագում կամ առնչակցություններ: Այս խմբի բառերի գերակշիռ մասը համապատասխանում է հայերենի գրական և խոսակցական տարբերակներում վկայվող ձևերին, որն էլ հիմք է ստեղծում ենթադրելու, որ բարբառային տարածքը երբեք մեկուսի չի եղել ընդհանուր հայկական միջավայրից՝ հաճախ արտացոլելով հայերենի հնագույն շերտերը և բնիկ տարածքի կենցաղն ու մշակույթը:

Կատարվել են բառաքննական և ստուգաբանական փորձեր մի շարք բառերի շուրջ՝ վերանայելով կամ հիմնավորելով դրանց ծագումը: Ենթադրվում է, որ «**լայ**» բառը («հնձված խոտի շերտ») հնդեվրոպական *k^hlei- «հենվել, թեքվել» արմատի բարբառային տարբերակն է, որից «շերտ» իմաստով զուգաբանություններ վկայվում են մասնավորապես սլավոնական խմբի լեզուներում: Հերքվում է «**լէլ**» («տիղմ, ցեխ») բառի թյուրքական ծագման վարկածը: «**Ղաբ**» («քարայր, կամարակապ

շինություն») բառի համար առավել հավանական է համարվում հնդիրանական *gaba- «քարայր, խոռոչ» ծագումը: Այս բառից է Սյունիքում կնոջ տարագի գլխամասի անվանումը: «**Թնթան**» («պտտահողմ») և «**թոռ**» («անձրև») բառերի քննության մեջ ներկայացվում են համապատասխանաբար հնդեվրոպական *dhor- «ցատկել» և *(s)ter- «անմաքուր հեղուկ» արմատների հետ առնչակցությունները՝ հիմնված բարբառային տվյալների վրա: «**Վարար**» («հորդառատ») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական *auēr- «հոսել» արմատի հետ՝ ստորին ծայնդարձով, որը կրկնության արդյունքում կորցրել է բառասկզբի **ա**-ն (հավանական **ա** > **ը** > **0** փոփոխություն):

1.2. «Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ» թեմատիկ խմբում ուսումնասիրվում են Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում համաժամանակյա լեզվավիճակով գործառվող այն բառերը, որոնք հիմնականում արտացոլում են հնդեվրոպական նախալեզվից ավանդված ձևախմբատային հատկանիշները՝ **մարթ**, **կընէգ** «կին», **ախճէգ** «աղջիկ», **հէր** «հայր», **մէր** «մայր», **ախաէր** «եղբայր», **քէր** «քույր», **թօնը**, **հարթնը** «հարս» և այլն:

Կարևոր տեղ է հատկացված ընտանեկան կապերն ու սերունդներն արտահայտող բառերի ուսումնասիրությանը: «**Մարթ**» բառի բազմիմաստությունը, որը ներառում է նաև «ամուսին» իմաստը, վկայում է հին շրջանում բառի լայն գործածության մասին և ընդգծում ընտանիքի կազմակերպման պատմության առանձնահատկությունները: «**Սօնգ**» («սերունդ, ժառանգ») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական *seu- «ծնունդ, որդի» հիմքի հետ՝ ենթադրելով դրա ձևախմբատային զարգացումը և պահպանվածությունը բարբառախոս միջավայրում արտաքին ազդեցությունների պայմաններում: Հատուկ քննության են ենթարկվում ընտանիքի-տոհմի շարունակականությունն արտահայտող և մեծ մասամբ բարբառային համարվող միավորները՝ «**ծօնը**», «**կօնը**», «**ծըռլանգ**», «**կըռլանգ**», «**օնը**», «**առնը**», «**հօն**», որոնք վկայում են բարբառային տարածքում սերնդի գոյաբանական շերտերի պահպանման մասին:

Այս ենթագլխի համեմատական վերլուծությունը (Աղյուսակ 2.2) ցույց է տալիս, որ «Մարդկություն» թեմատիկ խումբը Սյունիք-Արցախի բարբառներում ունի հնդեվրոպական ծագման բառապաշարի միջին աստիճանի պահպանվածություն (50 միավոր):

1.3. «Կենդանիներ» թեմատիկ խումբը հարուստ է հնդեվրոպական ծագման անվանումներով. դա պայմանավորված է պատմական Սյունիքի և Արցախի բարձր լեռնային և խիտ անտառային գոտիներում մինչև օրս

պահպանված կենդանական աշխարհով, անասնապահության ու որսորդության հնագույն ավանդույթներով:

Առանձնահատուկ քննության են արժանացել «**զըդի**» («կաթնակեր գառ»), «**կօրէ**» («կրիա»), «**մանդիլ**» («սարդոստայն») բառերը: «**Անգ**» («անգղ») բառի ստուգաբանական նոր փորձը, ինչպես նաև դրա կապը Մովսես Խորենացու կողմից հիշատակված Տորք Անգեղի կերպարի հետ թույլ են տալիս ենթադրել բառիս հնդեվրոպական *ank- «ծռել, թեքել» արմատից ծագած լինելը (ըստ թռչնի կտուցի ձևի): «**Ան-գեղ**» («տգեղ») տեսակետը ժողովրդական ստուգաբանություն է: «**Պըտէզնը**» («մսի որդ») բառը բխեցվում է հնդեվրոպական *bhei- «մեղու, պիծակ» արմատից, իսկ «**լօկ**» («լորտու սողուն») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական *(s)lēg- «թույլ, մեղկ» արմատի հետ՝ ընդգծելով նրա նախնական «թույլ» իմաստը:

1.4. «Մարմնի մասեր, մարմնական գործողություններ ու պայմաններ» թեմատիկ խումբը ամենամեծն է հնդեվրոպական աղբյուրներ ունեցող բառերի քանակով: Պահպանվել են հիմնական անվանումները: Կատարվել են բառաքննական և ստուգաբանական փորձեր «**խօրխ**» («մաշկ»), «**հարու**» [տալ] («պոզահարել»), «**սէռ**» («ողնաշար, լեռան զագաթ»), «**տըմտէմուկ**» («լինդ»), «**սէպոիկ**» («անատամ»), «**փափաշ**» («թոք»), «**խիրթիլօկ**» («խոշակ»), «**կ'անփ**» («ոտքերի արանքը»), «**իլիկ**» («ողնաշարի վերին մասը») բառերի շուրջ:

1.5. «Ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում և ամանեղեն» թեմատիկ խմբում նախահայերենից պահպանված բառերի քանակական և որակական հատկանիշները ժխտում են հայ էթնոսի՝ բարբառային տարածքում եկվոր լինելու թեզը: Մանրամասն քննության են ենթարկվել «**թըրթէվուտ**» («խմորեղենի տեսակ»), «**ածի/էկ/գ**» («ծեցրած ցորեն»), «**ծանվար**» («ցորենի տեսակ») բառերը՝ փորձելով ապացուցել դրանց հնդեվրոպական ծագումը՝ ըստ հնչյունական և իմաստային հատկանիշների:

1.6. «Հագուստ, անձնական զարդարանք և խնամք» թեմատիկ խմբում հնդեվրոպական ծագման բառերի պահպանվածության աստիճանը համեմատաբար ցածր է՝ նոր ժամանակներում բազմաթիվ փոխառություններով փոխարինված լինելու պատճառով: Ըստ Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի տվյալների՝ վերլուծվել են «**սէրէկ**» («կաշվի կտոր ամանների բերանը փակելու համար»), «**կըղան**» («հաստ պարան»), «**անրցիլ**» («հյուսվածքի սկիզբը») բառերը: «**Թաղիք**» և «**քէչա**» («թաղիք») բառերի համար վերանայվում է թյուրքական ծագման վարկածը՝ առաջարկելով «քէչա» բառի՝ հին հայերենի **գէջ** արմատից ծագումը: «**Սանդէլ**» («մանեկ լարել») և «**ցիլ(անգ)**» («մաշված կտորի թելեր») բառերը, ենթադրվում է, արտացոլում են հնդեվրոպական

համապատասխանաբար *k'ar- («մանել, կապել») և *(s)k'el- «կտրել» արմատների բարբառային զուգաբանությունները:

1.7. «Բնական, տուն, կահկարասի» թեմատիկ խումբը, ինչպես հայերենում, այնպես էլ հնդեվրոպական լեզուներում, համեմատաբար աղքատ է բնիկ բառերով: Այդուհանդերձ, բարբառախումբը պահպանել է հիմնական անվանումները: Շինարարական փայտանյութին՝ *գերանին* վերաբերող բառերի առատությունը առանձնահատուկ արժեք է ներկայացնում՝ բնորոշ լինելով նստակյաց ապրելաձև ունեցող ժողովուրդներին: «**Հերթ**» («տան կտուրի բացվածքը լույսի և ծխի համար»), «**լամփա**» («փոքր գերան»), «**լատան**» («ծածկի երկար ու բարակ գերան»), «**սարասընգի**» («ճոճանակ») բառերի շուրջ կատարված ստուգաբանական փորձերը հաստատում են դրանց նախահայերենյան գոյությունը: «**Կաղաղ**» («որջ, կենդանու բույն») բառի ծագումը բխեցվում է հնդեվրոպական *gol- «ապաստարան» արմատից՝ տարբերակելով այլ համանուններից: «**Վօրէ**» («քարայր») բառի հնդեվրոպական նախածնը՝ *uér- «շրջել, ոլորել», պատկերացում է ստեղծում բարբառային տարածքում առաջին բնականների կառուցման ու շահագործման մասին: Հիմնաշերտից եկող մի շարք բառեր թեև դուրս են մնացել բարբառային տարածքից արտալեզվական և լեզվական տարբեր ազդեցությունների հետևանքով, այնուհանդերձ թեմատիկ խմբում պահպանված նախահայերենյան արմատները կարևոր տեղեկություններ են տալիս տարածաշրջանի՝ մարդկության պատմության ամենավաղ շրջանից բնակեցված լինելու մասին:

1.8. «Երկրագործություն, բուսականություն» թեմատիկ խմբում շատ են հնդեվրոպական ծագման բառերը. դա վկայում է տարածաշրջանում երկրագործության հնագույն ավանդույթների մասին: Բարբառախումբը պահպանել է բազմաթիվ բնիկ բառեր՝ **արտ, հանդ, արօր, հերկել** «հերկել», **սերմ** «սերմ», **քաղել** «քաղել», **կամնը** «կալսելու գործիք», **մըղէղ** «մանր հացահատիկ», **պէրք** «բերք», **պըտօղ** «պտուղ», **ծառ, կաղնի** և այլն: Այս խմբի բնիկ բառերի առատությունը հիմնավորում է տեղաբնիկների՝ այս բնագավառում ունեցած մեծ հետաքրքրությունն ու բազմադարյան փորձը: **Ծեծ** բառի հ.ե. հիմքը *g'eg'- և բարբառային վկայությունը («ցողունը ծեծելով այրել», այլև՝ **ծո՛ծո՛ն անել** «ծեծել», «**ծո՛ծո՛ն**» («մոշենու չոր ցողուն»)), կարծում ենք, ամրապնդում են **ծանծ** բառի հ.ե. առնչակցության կարծիքը: «**Աշան**» կամ «**հաշան**» («հացահատիկը կալսելը») բառի ծագման համար առաջարկվում է հնդեվրոպական *(e)s-en «հնձելու ժամանակ, ամառ» արմատը՝ շեշտելով գործողության ժամանակահատվածը: Բառաքնական և ստուգաբանական փորձեր են արվում «**պըռօկ**» («բողբոջ, կոկոն»),

«ջալաղ» («պատվաստ»), «դօգոն» («կոստղ, խուլ»), «քլպել» («մաշկել, կճպել») բառերի շուրջ: Ենթագլխի վերլուծությունը (Աղյուսակ 8.2) ցույց է տալիս, որ «Երկրագործություն, բուսականություն» թեմատիկ խումբը Սյունիք-Արցախի բարբառներում ունի հնդեվրոպական ծագման բառապաշարի բարձր պահպանվածություն, որը վկայում է տարածաշրջանում հայկական տարրի չընդմիջվող գոյության, բնաշխարհի և հողագործական ավանդույթների հետ սերտորեն կապված լինելու մասին:

1.9. «Ֆիզիկական տարբեր գործողություններ և սրանց հարաբերությունը առանձին արվեստների ու արհեստների հետ՝ համապատասխան գործիքներով, նյութերով ու արտադրանքներով. այլ հասկացություններ» թեմատիկ խումբը թեև հարուստ է բնիկ բառերով, սակայն դրանք բարբառային տարածքում բավականին քիչ են ընդհանուր հայերենի համեմատությամբ: Դա պայմանավորված է երկարատև պատմական շփումների հետևանքով փոխառությունների (մասնավորապես պարսկերենից, արաբերենից և թյուրքերենից) ներթափանցմամբ: Սա ընդգծում է բառապաշարի զարգացման բարդ ընթացքը հնագույն շերտերի պահպանման և արտաքին ազդեցությունների ինտեգրման միջև: Հատուկ կարևորություն է տրվում բառաքննական-ստուգաբանական փորձերին, որոնք նպատակ ունեն ճշգրտելու բառերի ծագումն ու իմաստային զարգացումները: «Թակել» («ծեծել, հարվածել, մանրացնել») բառի բազմիմաստությունը և լայն գործածությունը բարբառում վկայում են դրա հնագույն լինելու մասին՝ հերքելով այլ լեզուներից հնարավոր փոխառություն լինելու տեսակետը: Ուսումնասիրվել են «**օնը**» («մուրճ, կոան») < *or- «հարվածել», «**մարել**» («կապել, կոճկել») < *mer- «քսել, փաթաթել» և այլ բառեր: «**Կըռօճ**» («աղի կտոր, հողակոշտ») և «**Կըռճել**» («ջարդել, մանրացնել») բառերի համեմատական քննությունը հիմնավորում է դրանց ծագումը հնդեվրոպական *greus- «փշրվել» արմատից՝ շեշտելով «պինդ, խտացած» իմաստային առանձնահատկությունները: Բարբառային տարածքում իմաստային առանձնահատկություններ է դրսևորել «**նէտ**» («տորքի մաս, գերան») բառը, «**կէմնը**» («թոկ») բառը բխեցվում է հնդեվրոպական *gemos- «բռնել, սեղմել» արմատից: **Կշկուռ > քըշկուռ || կըշկուռ (ք/կըշկըռել)** «հանգույց» բառը համարվում է հ.ե. կրկնակ արմատից՝ *gors-gors- «պտտել, ոլորել, հյուսել»:

Այս ենթագլուխն արժեքավոր է Սյունիք-Արցախի բնակչության նյութական մշակույթի, արհեստագործական ավանդույթների և բառաստեղծական մեխանիզմների ուսումնասիրության համար՝ նաև բնիկ բառերի՝ նոր իրողություններին հարմարվելու տեսակետից:

1.10. «Շարժում. տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն» թեմատիկ խմբի բառերից բառաքննական դիտարկումների են արժանացել «**հօլօլ**» («անիվ, գլորել»), «**շըկակել**», «**ծըլկել**» («փախչել»), «**կածան**» («նեղ ուղի, արահետ») և այլ բառեր: Որոշ բառեր զարմանալիորեն չեն պահպանվել բարբառներում կամ գրականի ազդեցությամբ են անցել բարբառային տարածք, ինչպես՝ **դեղևել, իջանել, ցածնում < ցած, տոգորել**: Օրինակ՝ «**իջնել**» բայը բարբառախմբում բացակայում է: Հասկացությունն արտահայտվում է բազմաթիվ այլ կազմություններով՝ **կըլխըվէր անէլ (կըլխըվէրէլ-գլխիվայրել), քըշանալ, յէր (վէր) կալ (վէր ընցընել)**, այլն՝ **լինջըվէրէլ** «բարձունքից՝ լեռ, սար և այլն, դեպի ցած իջնել», **խըժկել** «ուռուցքը իջնել, նստել», **յըռըթէվէլ** «հողը վարելով վերևից ներքև իջնել», **նստել, նի մընէլ, սըռըպարան ինէլ** «վերևից իջնել, վայրէջք կատարել», **ըստօրէլ** «արևը ցած իջնել, մայրամուտ թեքվել» և այլն, որոնց հիմքում ընկած են հայերեն արմատները:

1.11. «Ունեցվածք, սեփականություն և առևտուր» թեմատիկ խումբը Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում առանձնանում է բնիկ հնդեվրոպական ծագման բառերի սակավությամբ: Սա վկայում է տարածաշրջանում առևտրային հարաբերությունների համեմատաբար ուշ զարգացման և օտար ազդեցությունների մասին: Թեև պահպանվել են հիմնական հասկացություններն արտահայտող բառեր, ինչպիսիք են՝ *ունէմ* «ունենալ», *տէր, առնէմ* «առնել», *տալ, հարուստ, աղքատ* «աղքատ» և *կին* «գին», սակայն եզրույթների զգալի մասը փոխառյալ է:

Բառաքննական դիտարկումները կենտրոնանում են այս սակավաթիվ բնիկ բառերի ծագումն ու գործառնությունը ճշգրտելու վրա: Օրինակ՝ «**տնտղել**» («փնտրել, գննել») բառը, որը հիմնականում կապվում է «շարժվել, տատանվել» (**del-*) հնդեվրոպական արմատի հետ, այստեղ վերլուծվում է նաև «փնտրել, գտնել» իմաստային համատեքստում՝ որպես սեփականություն ձեռք բերելու գործողության նախապայման:

Փաստորեն Սյունիք-Արցախի հասարակության տնտեսական և սեփականատիրական հարաբերությունները ձևավորվել են արտաքին ուժեղ ազդեցությունների ներքո, թեև հիմնային հասկացությունները պահպանել են իրենց բնիկ արմատները:

1.12. «Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ» թեմատիկ խմբի բառերի պահպանվածությունը բավականին բարձր է: Հատկանշական է, որ այս ենթախմբում առկա են բառեր, որոնք վկայվում են միայն Սյունիք-Արցախում կամ սակավ են տարածված հայերենի մյուս տարբերակներում: Բառաքննական դիտարկումները և ստուգաբանական

փորձերը բացահայտում են բարբառային մի շարք բառերի ծագման ու իմաստային զարգացման կարևոր սկզբունքները:

«Գագաթ» հասկացության բարբառային տարբերակը հին հայերենի բուշտ բառն է («ուռուցք, բշտիկ» < *b(h)(e)u- «ուռչել»)՝ պուզտ || փուստ || բուստ (ած. կիրառությամբ՝ պուզտի || փուստի) «գագաթ, կատար»:

Հ.ե. *glendh- հիմքից բարբառախմբում վկայվում են կըլօնձ || կուլօնձ > կըլօնդրակ || կուլօնդ(ը)րակ «1. կլորածն ինչ-որ բան, 2. կղանքի կտոր»:

«Օնջ» կամ «ք'ոնջ» («անկյուն») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական *udhos- «տակ, ցած» նախաձևի հետ՝ բացահայտելով առնչակցությունը «Քարահունջ» տեղանվան հետ:

Կիպ և բարբառախմբի քիփ «կպած, հարած» բառերը Գ. Ջահուկյանի կողմից կազմված թեմատիկ խմբում ընդգրկված չեն: Աղերսվում են հ.ե. նախաձևի հետ՝ *gʷeb- «լորձնոտ, կպչուն, մածուցիկ»: Բարբառախմբում առկա է նաև քիփիկ/գ, որ սխալմամբ բխեցվում է թյուրք. kip «ծուլվել» արմատից:

«Ծիպ-լի» («փոքր, բարակ, ճկույթ») բառը ենթադրվում է հնդեվրոպական *k'ip- («բարակ ճկուն ճյուղ») նախաձևից ծագած:

Այս ենթազվիխ ուսումնասիրությունն արժեքավոր է հայոց լեզվի՝ տարածական հարաբերությունների, ձևերի և չափերի ընկալման պատմական զարգացումը լուսաբանելու համար:

1.13. «Քանակ և թիվ» թեմատիկ խմբում բարբառային տարբերակների հիմնական մասը ձևիմաստային էական փոփոխություններ չի կրել հայերենի այլ տարբերակների համեմատությամբ: Այս կայունությունը, նույնիսկ որոշ վերացական հասկացությունների բացակայության պայմաններում, վկայում է թվային համակարգի ամրության մասին:

Բառաքնական դիտարկումները շեշտում են հիմնական թվական անունների, ինչպես նաև քանակ արտահայտող բառերի բարբառային դրսևորումները: Հանուր, յոզն, արբեկ, բուռն, սաստիկ բառերը բացակայում են բարբառախմբում: Բազմություն արտահայտող բառերի հիմնական մասը նույնպես չի պահպանվել՝ յոլով, բոյլ, հոյլ:

1.14. «Ժամանակ» թեմատիկ խմբում ընդհանուր հայերենի 66 բառամիավորի դիմաց ուսումնասիրվող բարբառային տարածքը պահպանել է 35-ը: Չնայած որոշ բնիկ բառերի (օրինակ՝ հին, դանդաղ, հաճախ) փոխարինմանը օտար ծագման բառերով՝ հիմնային հասկացությունները կայուն են մնացել:

Բառաքննական դիտարկումները ընդգծում են հետևյալ բառերի ծագումնաբանական և իմաստային առանձնահատկությունները: «**Տիգի**» կամ «**տիգա**» («լույս, օրվա սկիզբ») բառը, որը գործածվում է մանկական խոսքում, պահպանում է հին հայերենի *տի* «օր» հիմքը: «**Յօրթ**» («դանդաղ քայլ») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական **er-*, **re-* «հանգչել, դանդաղել» բայանվան իմաստի հետ՝ հերքելով «վազել» իմաստով **յորդիմ** բայից ծագելու վարկածը: «**Քյոլթ**» («ալարկոտ, դանդաղաշարժ»), որը նաև նշանակում է «անորակ հաց», բառի ստուգաբանությամբ ճշգրտվում են հնդեվրոպական **kwat-* «խմոր, թթվել» և **ke-* «շարժվել» արմատներից ծագած համանունները: Այնուհետև *քյոլթ* «դանդաղաշարժ» բառը ներկայացվում է որպես գրական լեզվի «անքոյթ» բառի ինքնուրույն բարբառային տարբերակ: «**Թօն-թօն**» («թարմ») բառը, որը նշանակում է նաև «նոր եկած խմոր» կամ «մատղաշ բույս», բխեցվում է հնդեվրոպական **ter-* «թույլ, անհաստատ, թարմ» արմատից: «**Օէթ**» («արևածագ, արշալույս») բառը հանդես է գալիս որպես հնդեվրոպական **ai-* «այրել, լուսավորել» արմատի բարբառային դրսևորում:

1.15. «Զգայական ընկալումներ» թեմատիկ խմբում քննվում են *հոյր*, *համ*, *տեսողություն*, *լսողություն*, *շոշափելիք* արտահայտող նախահայերենյան շերտի բառերը: Հայերենում այս խումբը հարուստ է հնդեվրոպական ծագման բառերով, որոնց մեծ մասը պահպանվել է բարբառախմբում՝ հաճախ արտացոլելով նախնական իմաստները կամ դրսևորելով յուրահատուկ ձևիմաստային զարգացումներ: Բարբառախումբը չունի **հունչ** և **լուր** բառերը: Դրանք, հավանական է, դուրս են մղվել այն ժամանակ, երբ սրանց փոխարինող **սնս** և **խնքնր** փոխառությունները մուտք են գործել հայերեն: «**Փըշա/անշել**» («խոնավությունը քաշվել, չորանալ») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական **sp(h)ei-* «քաշել, ներծծել» արմատի հետ: «**Կօկլիկ**» («հարթ») և «**սօկլիկ**» («հարթ, ողորկ») բառերի համեմատական քննությունը բացահայտում է, որ դրանք, չնայած իրենց ձևիմաստային նմանությանը, ծագմամբ տարբեր են՝ համապատասխանաբար **ghogh-* «գիրկ, գոգավոր» և **kaghlo-* «փոքրիկ կլոր քար» արմատներից: Սա ընդգծում է բարբառում համանունների զարգացման բարդ մեխանիզմները: «**Շափաղ**» («ցուլ, շողշողուն») բառը, որի ստուգաբանության առանցքում Աստվածաշնչի «շաղփաղփութին» հասկացությունն է, կապվում է հնդեվրոպական **(s)p(h)el-* «փայլ, շողալ» արմատի հետ: Վերլուծվում է դրա իմաստային զարգացումը՝ «փայլատակող խոսքից» մինչև «դատարկախոսություն»: «**Հուպ**» («սեղմել, ճնշել, կպչել») բառը ներկայացվում է որպես հնդեվրոպական **ub-* «սեղմել» արմատի ուղղակի ժառանգորդ՝ ընդգծելով նրա իմաստային բազմաթիվ

դրսևորումները: «**Կալօ/ուղ**» («փափուկ, ճկուն») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական *ǵu- «ծռել» արմատի կրկնավոր կազմության հետ:

1.16. «Չգացմունք (ֆիզիկական որոշ դրսևորումներով). խառնվածքային, բարոյական և գեղագիտական ըմբռնումներ» թեմատիկ խմբի բառերը առատ են Սյունիք-Արցախի բարբառներում: Բարբառային տարածքը չի պահպանել հնդեվրոպական ծագման որոշ բառեր (օրինակ՝ *կիրք, խինդ, կայփառ*), որոնք փոխարինվել են օտար բառերով կամ այլ կազմություններով: Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում «զգացմունք» հասկացության հնդեվրոպական ծագման բառերի հիմնական մասը բարբառախումբը երկրորդաբար չի կրել: Առանձնապես առատ են բարոյական և խառնվածքային ըմբռնումներ արտահայտող ենթախմբերը:

Հատուկ ուշադրության են արժանացել մի քանի բառերի ստուգաբանական և իմաստաբանական հատկանիշները: «**Աջըղ**» («ոխ, վրեժ, զայրույթ») բառի համար հերքվում է թյուրքական ծագումը. հիմնավորվում է դրա՝ բնիկ հայերեն «ջիղ» արմատից սերած լինելը: Բառաքննությունը բացահայտում է նրա ձևիմաստային զարգացումները՝ «ուժ, մկան» նախնական իմաստից մինչև «բարկություն, հակառակություն»: «**Մուռ**» («ոխ, վրեժ, քեն») բառը, որը հոմանիշ է «աջըղ»-ին, կապվում է հնդեվրոպական *mur- «սև, մթություն» արմատի հետ՝ իմաստային զարգացմամբ դառնալով «ոխակիր, նախանձ»՝ *մուրփառ*: Ենթադրվում է, որ «**օնգատ**» կամ «**ունգատ**» («հաջողություն, շահավետ») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական *aug- «աճում, հավելում» հիմքի հետ: «**Հեռ**» («եռալը, ցավ, կսկիծ») բառի իմաստային բազմազանությունը վերլուծվում է հնդեվրոպական *ers- «հակառակություն, կռիվ» արմատի համատեքստում: «**խաղս**» («ուրախությունից թռչկոտելը, եռանդ») բառը ներկայացվում է որպես հին հայերենի «խաղ» բառի հնդեվրոպական *hel- «արագ շարժվել» արմատից ծագած բարբառային տարբերակ:

Այս ենթագլխի ուսումնասիրությունը (Աղյուսակ 16.2) բացահայտում է Սյունիք-Արցախի հասարակության սոցիալական և հոգեբանական յուրահատկությունները, ինչպես նաև հնագույն բարոյական և գեղագիտական ըմբռնումների լեզվական դրսևորումները: Այն ցույց է տալիս, թե ինչպես են բարբառները պահպանել զգացմունքների և խառնվածքի բնիկ անվանումները՝ դրանք հարմարեցնելով պատմականորեն փոփոխվող իրողություններին:

1.17. «Մտածողություն, միտք» թեմատիկ խմբում վկայվում է 38 միավոր, որ համեմատաբար ցածր ցուցանիշ է: Կատարված բառաքննական դիտարկումները լուսաբանում են հետևյալ բառերի

ծագումն ու իմաստային առանձնահատկությունները. «**պէլի**» («գիծ, խենթ») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական *b_h(e)ǵ- «ուռչել, այտուցվել» արմատի հետ: «**Մէկն(ել)**» («փռել, երկարել») բառի «անհասկանալին հասկանալի դարձնել» նրբիմաստը բացակայում է բարբառային տարածքում, ինչը վկայում է դրա՝ գրաբարում երկրորդաբար ձևավորված լինելու մասին: «**Դէլ**» («զառանցելը, անմիտ խոսելը») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական *del- «ասել, պատմել» արմատի հետ՝ հերքելով թյուրքական ծագման վարկածը:

1.18. «Ձայնական արտահայտություն, խոսք, ընթերցանություն և գիր» թեմատիկ խումբը բավականին հարուստ է հնդեվրոպական ծագման բառերով, որոնց մեծ մասը ձայնանմանողական է և պահպանել է նախնական հնչյունական ու իմաստային առանձնահատկությունները: Բարբառախումբը պահպանել է հիմնային բառեր՝ **ծէն** «ծայն», **դռողոռոն** «դռնչյուն», **յէրքէլ** «երգել», **ծիծաղէլ** «ծիծաղել», **լըսէլ** «լսել», **կիրէլ** «գրել», **կարթալ** «կարդալ» և այլն: Բառաքնական փորձերը կենտրոնանում են հետևյալ բառերի ծագումն ու իմաստաբանական զարգացումները ճշգրտելու վրա. «**թընկթընկալ**» («նվնվալ, անընդհատ լացի ծայն հանել») բառի ծագումը կապվում է *(s)ten- բնաձայնական արմատի հետ: Ենթադրվում է, որ Սյունիք-Արցախի բարբառներում վկայվող «**կուրկուփ**» («լուռումունջ») բարդ բառի հիմքում կարող է լինել հնդեվրոպական *ǵh₂b_h- «բերան, շրթունք» արմատի բարբառային տարբերակը՝ կապված «լռել» իմաստի հետ: «**Լալլիւշ**» («ոռնոց») բառը բխեցվում է հնդեվրոպական *plā- «խփել, ծեծել» հիմքից՝ -oշ ածանցով:

Այս ենթազխի ուսումնասիրությունը (Աղյուսակ 18.2) վկայում է ձայնանմանողական բառաստեղծության բնիկ արմատների մասին՝ բացահայտելով հայոց լեզվի հնագույն խոսքի մշակույթի առանձնահատկությունները:

1.19. «Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ» թեմատիկ խմբի՝ բնիկ հնդեվրոպական ծագման բառերի պահպանվածությունը բավականին ցածր է, ինչը պայմանավորված է պատմական տարածքի վարչական և հասարակական կառուցվածքներում տեղի ունեցած բազմաթիվ փոփոխություններով և օտար ազդեցություններով: Այնուամենայնիվ, բարբառն ապահովել է հիմնային հասկացությունների կայունությունը: Գ. Զահուկյանը բարբառային **լկ-ս/զտվել, լկ-ռտվել** բայերի համար նշում է հ.ե. ***(s)lēg-** արմատը: Սյունիք-Արցախի բարբառների համապատասխան բառերն էլ թերևս պետք է բխեցնել նույն հ.ե. արմատից. բացառելի չէ ***սլէկտա-սըլէթա, *լէկտ(ված)-լէթ(ված)** անցումը: **Լկստած** «անամօթ, չափազանց երես առած», **լկռտած** -

սկռտած, լղլղել, այլև լեթվել (> **լըթվօթուն**) «1. շփանալը, 2. լրբանալը» բառերը փաստորեն կարող են օրինակ լինել ***sl-, *sm-, *sn-** (շարժուն ***s-**ի առկայությամբ) նախադիր հնչյունախմբով սկսվող բառերի հարցը քննելիս: «**Սիմ**» («կոթող, սյուն») բառի հնդեվրոպական ծագումը կապվում է ***k'em-** «փող, բուն» և ***k'em-** «սյուն, ցողուն» արմատների հետ՝ բացահայտելով համանունների բարդ հարաբերությունները:

1.20. «Ռազմական գործ» թեմատիկ խումբ

Առենախոսության այս ենթազբառային վերլուծվում է Սյունիք-Արցախ բարբառախմբի բառապաշարում ռազմական գործին վերաբերող նախահայերենյան շերտը: Թեմատիկ այս խմբի բնիկ հնդեվրոպական ծագման բառերի պահպանվածությունը ամենացածրն է, որը համահունչ է հին հայերենում ռազմական տերմինների սակավությանը: Սա կարող է վկայել տարածաշրջանի բնակչության՝ պատմականորեն ոչ ինտենսիվ ռազմական գործունեության կամ այդ ոլորտի բառապաշարի արագ փոփոխությունների մասին՝ ի հաշիվ այլ լեզուներից անցած փոխառությունների: Բառաքնական դիտարկումները կենտրոնանում են այն եզակի բառերի վրա, որոնք պահպանվել են բնիկ շերտից: «**Կըռէվ**» («կռիվ») բառը թեև այս խմբում է ընդգրկվում, սակայն նրա բարբառային գործածությունը կամ համանշային շարքերը (օրինակ՝ **կօխ** «ըմբշամարտ») ցույց են տալիս ոչ այնքան պատերազմական, որքան առտին վեճերին ու պայքարին վերաբերող իմաստներ: «**Պիհըր**» («մահակ, գավազան») բառը, որը կարող է կիրառվել նաև մարտում, բխեցվում է հին հայերենի «բիր» բառից՝ ընդգծելով կենցաղային գործիքների՝ ռազմական գործառույթներ արտահայտելու հնարավորությունը: Այս ենթազբառային համադրական տախտակը ցույց է տալիս, որ Սյունիք-Արցախի բարբառներում ռազմական տերմինաբանության վրա մեծ է գրական լեզվի և փոխառությունների ազդեցությունը:

1.21. «Օրենք» թեմատիկ ենթազբառային վերլուծվում է Սյունիք-Արցախի բարբառներում պահպանված ենթադրաբար հնդեվրոպական ծագման մի քանի միավոր: Այս ոլորտի տերմինաբանությունը խիստ կախված է եղել հասարակական կառուցվածքի, պետականության և իրավական համակարգի զարգացումից, ինչպես նաև գրական լեզվի և արտաքին (հատկապես սեմական և իրանական) ազդեցություններից:

Գրաբարատիպ որոշ բառեր, որ կազմվել են հնդեվրոպական արմատների և մասնիկների միջոցով, բացակայում են բարբառախմբում՝ **ականջալուր, ականատես, այց առնեմ, (ը)ստ – գտանեմ**: Դրանց դիմաց բարբառախումբն ունի բարբառային համանիշներ՝ հմմտ.՝ **ականջալուր-անջուկը ծէնի, ականատես լինել – աշկավը տէսնալ** և այլն, որոնք, սակայն, հասկացությունները ստուգապես չեն արտացոլում:

1.22. «Կրոն և նախապաշարմունք» թեմատիկ խմբում Սյունիք-Արցախի բարբառները, ըստ բնագավառի կենսական նշանակության, պահպանել են քիչ բառեր: Չնայած քրիստոնեության ընդունման և տարածման հետ կապված լեզվական փոփոխություններին, ինչպես նաև գրական լեզվի ազդեցությանը՝ բարբառները հատկապես պահպանել են հնագույն հավատալիքների հետքերն արտացոլող հասկացություններ: **«Յէրզինք»** («երկինք») բառը պահպանում է ոչ միայն իր բնական, այլև «աստծու և երկնային հոգիների բնակավայր» իմաստը՝ կապված հնդեվրոպական պաշտամունքային պատկերացումների հետ (*dei- «շողալ» արմատից): **«Քաշկ»** («չար ոգի») բառի համար, որը վկայում է նախապաշարմունքային պատկերացումների մասին, առաջարկվում է հնդեվրոպական *sek-ti- «ինչ-որ էակ» արմատից ծագելու վարկածը՝ հերքելով «քաջ» բառի հետ նույնականացումը: **«Սոնդոն»** («խողովակաձև անցք, ուղի»), այստեղից՝ **«սոնդոն-կուկու»** («ոգի՝ երեխային սաստելու համար») բառերի համեմատական քննությունից բացահայտվում է հնդեվրոպական *sent- «ուղղվել, գնալ, ուղի» արմատից ծագումը: Սա արժեքավոր նյութ է տրամադրում հնագույն ծիսակարգերի, ճանապարհի դիցուհու պաշտամունքի և տեղանվանական առնչությունների ուսումնասիրության համար: **«Կոփ(էլ)»** («չար ոգու հարվածը») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական *(s)kep(h)- «պաշտպանել, խփել» արմատի հետ: Բարբառային բառապաշարը անփոխարինելի աղբյուր է՝ վերականգնելու տարածաշրջանի նախաքրիստոնեական պատկերացումներն ու ծիսակարգերը, մասնավորապես ստորին առասպելաբանության երևույթները և դրանց հետ կապված անվանումները:

1.23. «Դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ» թեմատիկ խմբի բառամիավորների հիմնական մասը դերանուններ են և սպասարկու բառեր:

Բառաքննական դիտարկումները լուսաբանում են մի քանի բառերի և մասնիկների ծագումն ու բարբառային գործառույթները: **«Նէստա»** («վրայից, կապած») բառի ծագումը կապվում է հնդեվրոպական *ned- «կից, կցորդ, կպցնել» հիմքի հետ՝ ցույց տալով բարբառում նրա յուրահատուկ ձևաիմաստային զարգացումները: Անձնական դերանվան երրորդ դեմքի բացակայությունը (*նա*) և դրա փոխարեն *ինքը*, *էտ*, *տա* դերանունների գործածությունը վկայում է բարբառի հնագույն լեզվական մնացուկների մասին: Հավանական է, որ **լոխ «ողջ»** որոշյալ դերանունը ձևավորվել է **այլ ողջ** կապակցությամբ: **Ողջ**-ի վերջադիր **ջ**-ն նկատվում է **լոխճ՝ լոխճին, լոխջան** ձևերում՝ **ջ > չ** կամ **ճ**, իսկ **լ**-ն հավանաբար մնացուկ է **այլ**-ից:

ԳԼՈՒԽ 2. ՎԱՂՆՋԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՇԵՐՏԸ ԱՐՑԱԽ-ԱՅՈՒՆԻՔ ԲԱՐԲԱՌԱԽՄԲԻ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

Երկրորդ գլուխը նվիրված է Սյունիք-Արցախ բարբառախմբի բառապաշարի՝ վաղնջական և հին հայերենի շրջաններից ավանդված բառերի և փոխառյալ շերտերի համաժամանակյա և տարաժամանակյա քննությանը: Այս գլխում ընդգծվում է, որ ոչ միայն բարբառների, այլև դրանց բառապաշարի զարգացումը միանշանակ չի համընկնում հայերենի շրջանաբաժանումներին, ուստի վաղնջահայերենի և հին հայերենի շրջանը պայմանականորեն ներառում է Ք.ա. III հազարամյակից մինչև XI դարը՝ դիտարկելով գրաբարը որպես հիմնական և գրավոր չափանիշ:

Երկրորդ գլուխը երկու հիմնական ենթագլխի է բաժանվում: Առաջին ենթագլխում քննվում են գրաբարում վկայված և Սյունիք-Արցախ բարբառախմբին ավանդված ընդհանուր հայերենյան բառերը՝ ըստ դրանց թեմատիկ պատկանելության, ձևիմաստային առանձնահատկությունների և հիմնական խոսքիմասային (գոյական, բայ, ածական) պատկանելության: Երկրորդ ենթագլուխը նվիրված է վաղնջահայերենի և հին հայերենի (V դարից առաջ՝ մինչև XI դարը) շրջանում բարբառախմբի փոխառություններին՝ ըստ ծագման աղբյուրների (խուռերեն, ուրարտերեն, սեմական, իրանական, կովկասյան, հունական): Փոխառությունների մեծ մասը բարբառային տարածք ներթափանցել է գրական լեզվի ազդեցությամբ: Այս դեպքում բարբառը հանդես է եկել ոչ միայն որպես գրաբարը պահպանող, այլև ակտիվ և ստեղծագործաբար վերաիմաստավորող ժառանգորդ՝ հիմնային բառարմատների հիման վրա ստեղծելով նոր կազմություններ և իմաստներ:

2.1. Բարբառայի բառեր, որոնք վկայվում են գրաբարում

Այս ենթագլխում հանգամանորեն քննվում է այն բառաշերտը, որը Սյունիք-Արցախ բարբառախմբին է ավանդվել վաղնջական և հին հայերենից և վկայվում է գրաբարի մատենագրության մեջ: Ընդգծվում է, որ բարբառային բառապաշարի շերտերի քննությունը գրաբարից անկախ անհնար է, ուստի կիրառվում է զուգադրական քննություն՝ բացահայտելու գրաբարի և բարբառախմբի բառապաշարի առնչակցությունները: Վերլուծվում է, թե ինչպես է հին հայերենի հիմնաշերտը, որի կորիզը հնդեվրոպական բառերն են, զարգացել, առաջացրել գրական և բարբառային տարբերակներ և որակական ու քանակական առումով տարբեր ենթաշերտեր:

Ուսումնասիրությունը թեմատիկ խմբերում առանձնացնում է հին շրջանից ավանդված գոյականներն ու բայերը՝ դասակարգելով դրանք ըստ իմաստային և ձևաբանական առանձնահատկությունների:

Արհեստի բնագավառի գոյականների (ասպ, ծոց, փոր // փոր «փոր», կացին, հորաք «ուրագ», ածուխ, արծաթ, արկաթ, վեսկի, պղինձ, պօվ «բով», պէփ «բորբ» և այլն) մի մասը նոր հասկացություններ է առաջ բերել տարածաշրջանի բարբառներում կամ համանշախին զույգեր է կազմել այլ բառերի հետ: Հատկանշական են «ասպ» բառը, որը բարբառում ունի «ջուլիակի հաստոցի մաս» իմաստը, և նրանից ածանցված «ասպէլ» բայը:

Գրաբարում վկայվող բուսանունների (ավելուկ, բանջար, դաղձն, թրթնջուկ, խոփ, ծնեբեկ, կոփեմ, մամուռ, սամիթ և այլն) հիմնական մասը Սյունիք-Արցախի բարբառներում ենթարկվել է հնչյունական տեղաշարժերի, իսկ որոշ դեպքերում (օրինակ՝ գաղփիկուր > կըխարկոնը, փըխարկոնը) դժվար է որոշել հին հայերենից անցման ուղին՝ հնչյունական զգալի փոփոխությունների պատճառով: Քննվում է նաև գիլիմաստրի բուսանվան ձևավորման բառակազմական և իմաստաբանական բարդությունը: Բարբառախոս միջավայրում պահպանված է նաև ճիղմ ածականը՝ «դալար», որ չնայած ինքնուրույն գործածություն չունի, բայց նրանով կազմվել են մի շարք գոյականներ՝ ճըղմաղի(ն)ք «1. աղիք, 2. բարակ աղիք», ճըղմակ «ճյուղերով վանդակ կամ հյուղակ», որ նույնիմաստ է ճըղաղակ կամ ճըղար/լակ տարբերակների հետ:

Երկրագործությանը վերաբերող գոյականների քննությունը կարևոր տեղեկություններ է տալիս ոչ միայն հնագույն երկրագործական կենցաղի, այլև բարբառների բառակազմական միջոցների մասին: Օրինակ՝ բարբառային տարածքում բավականին տարածված է պահ // պիհ // պիհի բառը, որով ստեղծվել են այլ կազմություններ, որ չեն վկայվում գրաբարում՝ պահավ փայ, պիհըռէխ > պիհըռէխը քիցէլ, պիհակօթ, պիհավպան: Կամը բառից տարբեր է կեմ – կէմը՝ «խոտերից կամ բարակ ճյուղերից ոլորելով պատրաստված թոկ»: Բարբառախոսմբն ունի կէմնակօթ «թոկի երկու ծայրերը բռնելու և ոլորելով խորձը կապելու համար հարմարեցված բռնակը», այստեղից՝ կէմնապէլ «թոկը, կեմը կտրել», կէմնացու «թոկ պատրաստելու ճյուղեր կամ խոտեր», կէմը կէմն/ին փինիլ «1. իրար օգնել, ձեռք բռնել», կէմնակապ «կեմով կապված», կէմնավ անէլ «կապել», այլ կապակցություններում՝ խօսկ/քը կէմնը // կէմնավ անէլ, կապէլ «1. համոզել, 2. պայմանավորվել»:

Մարդկությանը վերաբերող գոյականները (մարթ, ախճիկ, կընէգ, հէր, մէր, ախպէր, թօռնը, հարթնը, դօրփէր, աքէր) բարբառային տարածքում պահպանվել են գրեթե անփոփոխ կամ մասնակի հնչյունական տեղաշարժերով: Մի քանի հասկացություններ բառակազմական և իմաստաբանական զարգացումներ են ցուցաբերել:

Ժամանակի իմաստ ունեցող բառերը հիմնականում պահպանվել են հնչյունական տեղաշարժերով: Եղանականիշ բառերից մուտ բաղադրիչով ձևավորվել են ժամանակ նշող անունները, որ նախորդում են ամառ և ծմեռ եղանակների սկզբին՝ *ամէռնը // ամէռը // ամառ > ամառնամուտ - ըմըռնամուտ*, այդպես և՛ *ծմեռն - ծը/իմէռնը > ծըմըռնամուտ*: Ամառնամուտ և ծըմըռնամուտ բառերը համապատասխանաբար մատնանշում են տաք և սառը եղանակների գալուստը, որ սկսվում են գարնան և աշնան կեսերից: Չնայած լայն գործածություն ունեն *ամիս* և սրանով կազմված՝ *ամսագլուխ - ըմսըկնլօխ, ամսական - ամսէկան // ըմսէկան* բառերը, սակայն շարունակվում է ամիսը հաշվել լուսնի օրերով, ինչպես՝ *լուսընգան նօրէլ* «լուսնային ամիսը սկսվել», *լուսին-լուսին իրէվալ // ըրվալ* «ուշ-ուշ երևալ, հանդիպել», *լուսնի պիօրը* «ամսվա գլուխը», *լուսնին կէսին* «ամսվա կեսին» և այլն:

Ունեցվածք, փուն, կահկարասի (*աման, պիլանի* «բանալի», *պարց* «բարձ», *թօրէն* «թոնիր», *ճըրաքու* «ճրագու», *շէմք* «շեմ», *փօն* «տուն» և այլն) բառանվանումների հիմնական մասը կրում է գրաբարի մատենագրության մեջ արտացոլված իմաստը: Քիչ չեն նաև բարբառային տարածքում իմաստային ճյուղավորումներ ստացած բառերը: Առկա է, օրինակ, իմաստի նեղացմամբ նոր տարբերակ-բառերի առաջացում, ինչպես՝ *ցախ* բառը գործածվում է *ցախ // ճախ // ճէխ*, և, կարծում ենք, սրանից առաջացած է *ցաք* «մի տեսակ փշոտ թուփ, որ հիմնականում օգտագործվում է ցանկապատեր դնելու համար»՝ *ցաքի, ցաքի փօշ, ցաքի ճըպատ* և այլն: Կան կազմություններ, որ առավելապես բնորոշ են բարբառախմբին և չեն հանդիպում հայերենի այլ տարբերակներում: Օրինակ՝ *փօտ // փօթ* բառի՝ գրաբարում ունեցած «ծալք, խորշում, կնճիռ» իմաստներից բացի բարբառախմբում կա «արատ, թերություն, պակասություն», այստեղից՝ *փօթ անում* «մականուն», *փօթ տինէլ* «1. անուն կացնել, 2. վատաբանել», *փօթ արուն* «վարակված արյուն»: Կամ՝ *ծէփ > ծէ/իփէլ* բառի «օծումը, պատելը» իմաստներից բացի բարբառախմբում ունի նաև՝ «1. հարվածել, 2. արագ անցնել, 3. մի տեղ արագորեն գնալ ու վերադառնալ, շուտ գալ հասնել» իմաստները:

Կենդանական աշխարհին վերաբերող բառերի (*ագռավ - ակըռէվ, աղանեակ - յուղունիկ // յըղունիկ, անգղ - անգ // անգլ, արծուի - արծիվ, բադ - բադ, բու - պէվ // պօվ > քօքբու, գայլագռավ - կրուկակռէվ // կիլակռէվ, լոր // ըլօր* և այլն) հիմնական մասը պահպանվել է բարբառային տարածքում: Որոշ բառեր էլ բարբառային-ժողովրդական վերանվանումներ են ստացել՝ *քի/ըշէրի, քիշէ/իրածէտ, չօբանխափի* և այլն:

Ռազմական կյանքին վերաբերող տերմինների սակավությունը վկայում է տարածաշրջանի բնակչության ոչ ինտենսիվ ռազմական

գործունեության մասին: Լեզվական տվյալները համընկնում են պատմական փաստերի հետ այն առումով, որ մեր հարևան շատ ժողովուրդներ ռազմական բնագավառում հայերենին մի քանի անգամ գերազանցող բառեր են ունեցել: Օրինակ՝ իրանական լեզուներից այս բնագավառում հայերենին հիսունից ավելի բառեր են անցել: Պատկերը բնականաբար այլ է բարբառներում. քիչ են ոչ միայն ներթեմատիկ խմբերը, այլև դրանցում ընդգրկված բառերը: Հայերենը, ինչպես և նրա բարբառները ռազմական բնագավառի տերմինները հարստացրել են այլ լեզուներից փոխառած հասկացություններով:

Հին հայերենից **ֆիզիկական աշխարհ** նշող շատ գոյականներ լեզվի պատմական զարգացման ընթացքում աճել, նախնական՝ հիմնական իմաստի կողքին ձեռք են բերել ուրիշ իմաստներ և նրանցով կազմություններ, օրինակ՝ *կաշկառ - քաշկառ* 1. «քարերի կույտ, որ գոյանում է արտերը, այգիները մաքրելուց կամ հանգած հրաբխային ապարներից, 2. փվածքից, 3. «Նաև ի թանձրամած *կաշկառուտին* ի նոյն ձորին կայր եկեղեցի մի յանուն սրբոյ հայրապետին...»¹: Այս իմաստները առկա են հիմնականում Գորիսի բարբառում: *Կըշկոն > քըշկըռել*, սրանցից՝ *քըշկոն քիցել*, *քըշկոն ինգել* հարադրությունները գործածական են այլ իմաստներով, այսպես՝ *քըշկըռել* 1. «հանգուցել, 2. փխր.՝ կաշկանդել, 3. մեկին խիստ խոսքերով լռեցնել», *քըշկոն*² 1. «կապ, հանգույց, 2. փխր. «բարդ դրություն, իրավիճակ»: Բառիմաստային այս ձևերը տարածված են Սյունիք - Արցախում, բայց թե սրանց դիմաց քաշկառ-ը որքանով է աղերսվում գրաբարից ծագած «քարակույտ» իմաստին, դժվար է ասել:

Նկատվում է, որ *Կրոնին վերաբերող բառերը* ձևաիմաստային առումով առանձնապես փոփոխություններ չեն կրել, կազմությամբ գրաբարատիպ են: Սակայն կան բաղադրություններ, որ մատենագրական աղբյուրներում չեն հիշատակվում: Որոշ բառեր էլ, ինչպես *կայտորհնէք*, բարբառախոս հանրության շրջանում այլ տարբերակներ չեն ունեցել:

Քննվում են նաև **ուրելիքի և խմելիքի, հագուստի, անձնական զարդարանքի և խնամքի, հասարակական հարաբերությունների, ֆիզիկական կյանքի, շենք - շինության** հետ կապված հինհայերենյան իմաստային մերձավորության բառերը Սյունիք-Արցախի բարբառներում:

Սյունիք-Արցախ բարբառային տարածքի **բայական համակարգը** նույնպես հարուստ է՝ կազմված ծագումնաբանորեն տարբեր հիմքերից և

¹ Օրբելեան Ստեփաննոս, Պատմություն նահանգին Սիսական, Փարիզ, Ի գործատան Կ. Վ. Շահնազարեանց, 1859, էջ 91:

² Է. Աղայանը *կար (կարաանդ)* բառի իմաստը նույնացնում է *քըշկոն*-ի հետ՝ *կար* «հանգույց» արմատով (տես՝ Աղայան Է. Բ., Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 82):

հին հայերենի համեմատությամբ պատմական զարգացման ընթացքում բավականին տեղաշարժեր կրած: Հին հայերենից անցած բայերը թեև քանակապես զիջում են գոյականներին, բայց լայն տարածում ունեն բառիմաստային գրեթե բոլոր խմբերում, մասնավորապես՝ երկրագործության, ռազմի, բնության և ֆիզիկական այլ երևույթների, կրոնական, մարդու կյանքի և գոյության, զգայական ընկալումների և այլն: Ձևաիմաստային հետաքրքիր զարգացում է ունեցել *աչել* // *աշել* - *յէշէլ* բառը, որը բարբառախմբում բազմաթիվ իմաստներ և կազմություններ է ձեռք բերել՝ *չեզոք* սեռով՝ «1. նայել, 2. սպասել, 3. հետևել» և այլն, *ներգործական*՝ «1. կարևորել, 2. ստուգել», *չեզոք* և *ներգործական*՝ «աչքի անցկացնել, կարդալ» և այլն:

Կան բառեր, որոնց աղերսները հինհայերենյան նման կամ մոտ ձևերի հետ բավականին մթագնած են: *Աչառել* (*աչառեմ*) բայը գրաբարում ունի «1. աչառել, կողմնապահություն անել, աչքի տակ առնել, 2. նախապատվություն տալ» իմաստները, *չռռէլ*-ը *աչառել* բայի կրճատված ձևն է, որը առաջ է եկել *աչառել* > *չառել* > *չռռէլ* փոփոխությամբ՝ «աչքերը, ձեռքերը, ոտքերը, բերանը լայն բանալ»:

2.2. Հին հայերենում վկայված և բարբառային տարածք անցած փոխառությունների ծագումնաբանական դասակարգումը

Այս ենթագլուխը նվիրված է վաղնջահայերենի և հին հայերենի շրջաններում Սյունիք-Արցախ բարբառախմբի բառապաշար ներթափանցած փոխառությունների ծագումնաբանական դասակարգմանը: Բարբառային բառապաշարի փոխառյալ շերտերն ունեն բազմազան աղբյուրներ՝ ներառելով ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված փոխանցումներ, որոնք էական են տարածաշրջանի լեզվամշակութային զարգացման պատկերը վերականգնելու համար:

Դասակարգումն իրականացվում է ըստ փոխառությունների ծագման աղբյուրի.

Խոռոներենից և ուրարտերենից անցած բառերը ընդհանուրհայերենյան են և կազմում են բառապաշարի հնագույն փոխառյալ շերտը:

Սեմական լեզուներից (ակկադերեն, արամեերեն, ասորերեն) փոխառությունները (*տղայ* > *տըղա*, *քալշ* > *քոշ*, *մաշկ*, *շամփուր*, *խմոր*, *դար*, *շաբաթ* > *շափաթ*, *ուրբաթ* > *օրփաթ*, *բերդ*, *աքսոր*) Սյունիք-Արցախ բարբառախմբին հիմնականում անցել են գրաբարի միջոցով՝ արտացոլելով կրոնական, կենցաղային և վարչական ոլորտների լեզվական ազդեցությունները:

Իրանական լեզուներից (պարթևերեն, միջին պարսկերեն, նոր պարսկերեն) փոխառությունները կազմում են ամենաստվար շերտը՝

վկայելով տարածաշրջանի և իրանական ժողովուրդների միջև եղած խորքային ու երկարատև փոխշփումների մասին: Դրանք ներառում են ինչպես գրաբարում լայն տարածում ունեցող բառեր, այնպես էլ բացառապես բարբառներին բնորոշ հնաբանություններ: Քննության են առնվում իմաստային տեղաշարժերի դեպքերը (*խոկ* > *խօկել* «զգվել», *ճար* > *ճար* «թոյն») և բառերի ծագումնաբանական առանձնահատկությունները (*խաշփուշ*, *թափ*, *գալղան*, *զուգագ/կ*):

Կովկասյան լեզուներից (քարթվելական, նախյան-դաղստանյան) փոխառությունները (*բոգ*, *ճիպո*, *ծանր*, *զգվել*, *ոչխար*, *խոփ*, *քած*, *չղջիկ*, *կրուց*), չնայած համեմատաբար սահմանափակ քանակին, կարևոր են տեղական մշակութային փոխազդեցությունները հասկանալու համար: Վերլուծվում են իմաստային և հնչյունական առանձնահատկությունները՝ շեշտելով դրանց դերը բարբառային բառապաշարի հարստացման գործում:

Հունարենից փոխառությունները (*փոս*, *մարմար*, *մեդաքս*, *բաղանի-ք*, *կամար*, *կիրակէ* > *գիրազի*, *եկեղեցի*) բարբառախմբում համեմատաբար քիչ են և հիմնականում անցել են ընդհանուր հայերենի կամ գրաբարի շերտից՝ արտացոլելով քաղաքակրթական և կրոնական ոլորտների ազդեցությունները:

Այս ենթագլխի ուսումնասիրությունը բացահայտում է Սյունիք-Արցախ բարբառախմբի՝ որպես բազմաշերտ և դինամիկ լեզվական համակարգի պատմությունը, որտեղ փոխառությունները ոչ միայն հարստացրել են բառապաշարը, այլև հաճախ վերաիմաստավորվել և հարմարեցվել են տեղական լեզվամտածողությանը:

Ատենախոսության հիմնական **եզրակացություններն** են.

1. Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի՝ նախահայերենից ավանդված շերտերի համակարգային և թեմատիկ քննությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

1.1. Սյունիք-Արցախի բարբառային տարածքի բառապաշարի ծագումնաբանական վերլուծությունը հաստատում է, որ բարբառային միավորների մեծ մասը, հայոց բազմադարյան պատմության ընթացքում առանց ընդմիջումների լինելով բնիկ տարածքում, հայերենի բառապաշարի նախահայերենյան (հնդեվրոպական) շերտի պահպանման և վերականգնման կարևորագույն օջախներից է: Բացահայտվում է, որ ընդհանուր հայերենի համար արձանագրված հնդեվրոպական ծագման բառային միավորների զգալի մասը վկայվում է ուսումնասիրվող բարբառային տարածքում՝ փաստելով նրա բացառիկ պահպանողական բնույթի և լեզվի պատմական խորքերի հետ անխզելի կապի մասին:

1.2. Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի ուսումնասիրության թեմատիկ-համադրական մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռել վերանայելու նախահայերենյան բառաֆոնդի որակական և քանակական պատկերը:

1.3. Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի՝ հնդեվրոպական ծագման կամ այդպիսին ենթադրվող բառերը համեմատական տախտակում զուգահեռվել են Կ. Բաքի, ապա՝ Գ. Ջահուկյանի կատարած հետազոտությունների արդյունքների հետ: Ընդհանուր հայերենի համար արձանագրված հնդեվրոպական ծագման 2086 բառային միավորի դիմաց Սյունիք-Արցախի բարբառային տարածքում վկայվում է 1319-ը: Այս բարձր ցուցանիշը փաստում է բարբառային միջավայրի լեզվապահպանման բացառիկ բնույթը և պատմական շրջանի բառապաշարի հետ նրա խորքային ու անխզելի կապը:

1.4. Առանձնահատուկ նշանակություն ունի բարբառի դերը հնաբանությունների պահպանման գործում: Համաձայն տվյալների՝ ընդհանուր հայերենի բարբառներում վկայված 158 միավորներից 127-ը գործածական է Սյունիք-Արցախի բարբառներում:

1.5. Ոչ պակաս կարևոր է Սյունիք-Արցախի բարբառների և խոսվածքների դերը ստուգաբանական վիճելի հարցերի լուծման համար: Ընդհանուր հայերենի համար վիճահարույց համարվող 292 բառերից 151-ի քննության համար Սյունիք-Արցախի բարբառները տրամադրում են հարուստ նյութ՝ լինի դա հնչյունական արխաիկ ձև, պահպանված նախնական իմաստ թե բառակազմական կաղապար:

1.6. Թեմատիկ խմբերի վերլուծությունը բացահայտում է հնդեվրոպական ծագման բառապաշարի պահպանվածության տարբեր աստիճանները Սյունիք-Արցախի բարբառային տարածքում՝ միաժամանակ երևան հանելով դրանց լեզվամշակութային և պատմական նշանակությունը:

Ա. Հիմնարար՝ կենցաղային և բնական ոլորտներ (ամենաբարձր պահպանվածություն). «Ֆիզիկական աշխարհ» (108 միավոր), «Մարմնի մասեր, մարմնական գործողություններ ու պայմաններ» (141 միավոր), «Երկրագործություն, բուսականություն» (88 միավոր), «Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ» (97 միավոր) և «Շարժում. տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն» (87 միավոր) թեմատիկ խմբերը ցուցադրում են նախահայերենյան բառաշարի ամենաբարձր պահպանվածությունը: Այս բարձր ցուցանիշը վկայում է Սյունիք-Արցախի բնակչության և բնական միջավայրի միջև եղած հնագույն, անմիջական ու անխզելի կապի մասին:

Բ. Սոցիալական և մտավոր ոլորտներ (միջին աստիճանի պահպանվածություն). «Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ» (50 միավոր), «Ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում և ամանեղեն» (70 միավոր), «Կենդանիներ» (77 միավոր), «Զգայական ընկալումներ» (64 միավոր), «Զգացմունք (ֆիզիկական որոշ դրսևորումներով)» (77 միավոր) և «Ձայնական արտահայտություն, խոսք, ընթերցանություն և գիր» (64 միավոր) թեմատիկ խմբերում նկատվում է բնիկ բառերի պահպանվածության միջին աստիճան: Այս ոլորտները, լինելով կենցաղի և սոցիալական փոխազդեցությունների անբաժան մաս, մի կողմից՝ պահպանել են հիմնային հնդեվրոպական բառաշերտը, մյուս կողմից՝ կրել են որոշակի փոփոխություններ՝ կապված հասարակական կառուցվածքի բարեշրջության, մշակութային փոխազդեցությունների և նոր հասկացությունների ներթափանցման հետ:

Գ. Մասնագիտացված և վերացական ոլորտներ (ամենացածր պահպանվածություն). «Ռազմական գործ» (8 միավոր), «Օրենք» (17 միավոր), «Ունեցվածք, սեփականություն և առևտուր» (25 միավոր), «Հազուստ, անձնական զարդարանք և խնամք» (26 միավոր), «Բնակարան, տուն, կահկարասի» (15 միավոր), «Տարածքային, հասարակական և քաղաքական բաժանումներ» (29 միավոր), «Կրոն և նախապաշարմունք» (21 միավոր) և «Դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ» (59 միավոր) թեմատիկ խմբերում դիտարկվում է բնիկ հնդեվրոպական բառերի պահպանվածության համեմատաբար ցածր մակարդակ: Ցուցանիշները վկայում են, որ այս ոլորտները պատմականորեն առավել ենթակա են եղել գրական լեզվի կանոնարկմանը, օտար ազդեցություններին և սոցիալ-քաղաքական փոփոխություններին:

2. Սյունիք-Արցախ բարբառախմբի հինհայերենյան բառաշերտերի համակարգային քննությունը հանգեցնում է հետևյալ եզրակացություններին.

2.1. Սյունիք-Արցախի բարբառները հին հայերենի բառապաշարի ոչ թե պասսիվ, այլ ակտիվ և ստեղծագործաբար վերաիմաստավորող ժառանգորդն են: Բարբառախմբում ոչ միայն պահպանվել է գրաբարյան շրջանի բառերի հիմնական կազմը, այլև դրանց հիման վրա, դրանց համաբանությամբ ստեղծվել են նոր բառեր, որոնք բացակայում են գրական լեզվում: Սա վկայում է բարբառի՝ որպես հնագույն շերտի հետ սերտորեն կապված, բայց և ինքնուրույն զարգացող լեզվական միավորի մասին:

2.2. Գրաբարում վկայված բառերի համեմատությամբ բարբառախմբում արձանագրվել են իմաստային տեղաշարժերի բոլոր

հիմնական տիպերը՝ իմաստի նեղացում, ընդլայնում, փոխաբերական զարգացում և շրջում:

2.3. Բարբառախումբը հին հայերենի բառարմատները պահպանել և ակտիվորեն կիրառել է բառակազմական բազմապիսի հնարավորություններով: Մատենագրական աղբյուրներում վկայված բազմաթիվ արմատներ բարբառային տարածքում հիմք են դարձել նոր բարդությունների, ածանցավոր բառերի, կայուն կապակցությունների և նոր հասկացությունների ստեղծման համար:

2.4. Ատենախոսության մեջ քննված բառային-արմատական տվյալների հիման վրա կազմված վիճակագրական վերլուծությունը բացահայտում է տարածաշրջանի բարբառների կառուցվածքային առանձնահատկությունները: Պահպանված բառաֆոնդի գերակշիռ մասը (մոտ 78%) կազմում են գոյականները: Դա վկայում է, որ Սյունիքի և Արցախի բարբառները առաջին հերթին պահպանել են նյութական աշխարհը նկարագրող անվանումները: Բայական բառապաշարը (մոտ 17%) ներկայացնում է հիմնական գործողությունները, իսկ ածականների համեմատաբար փոքր տեսակարար կշիռը (5%) բնական է լեզվի զարգացման ընթացքում դրանց փոփոխվելու միտման համար:

2.5. Փոխառյալ շերտերի վիճակագրական վերլուծությունը ոչ միայն քանակապես հիմնավորում է Սյունիք-Արցախի բարբառների պատմական կառուցվածքը, այլև հանդես է գալիս որպես պատմալեզվական արժեքավոր գործիք՝ վերականգնելու Սյունիք-Արցախ տարածաշրջանի լեզվամշակութային զարգացման պատկերը: Ուսումնասիրված բառաֆոնդի բացարձակ միջուկը **ընդհանուրհայերենյան բառերն են (72.8%)**, ինչը փաստում է բարբառի հայկական հիմքի-միջավայրի ամրությունը: Փոխառյալ շերտերի հարաբերակցությունը հստակորեն արտացոլում է պատմական փոխշփումների բնույթը:

Ա. **Իրանական տարրի գերակշռությունը (19.8%)** մյուս փոխառությունների համեմատությամբ վկայում է խորքային և երկարատև պատմամշակութային փոխազդեցությունների մասին:

Բ. **Սեմական (3.6%), կովկասյան (2.1%) և հունական (1.8%)** փոխառությունների համեմատաբար սահմանափակ քանակը արտացոլում է համապատասխանաբար գրքային-կրոնական, տեղական-հարևանական և քաղաքակրթական ազդեցությունները:

Գ. Բարբառը հանդես է եկել որպես յուրօրինակ լեզվական «գտիչ»՝ ընդունելով և յուրացնելով այն բառերը, որոնք համապատասխանել են իր կառուցվածքին և բարբառախոս հանրության լեզվամտածողությանը,

մինչդեռ գրաբարյան և ետգրաբարյան շրջանի մի շարք վերացական կամ գրքային բառեր դուրս են մնացել գործածությունից:

2.6. Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում մի կողմից՝ նախահայերենյան շերտի բացառիկ բարձր պահպանվածությունը (ըստ Գ. Զահուկյանի տվյալների՝ 63%-ը), հնաբանությունների գերակշիռ առկայությունը (81%-ից ավելին) և ստուգաբանական վիճելի հարցերի լուծմանը նպաստող նյութի հարստությունը (51%-ի համար), մյուս կողմից՝ գրական լեզվի և այլ լեզուների ազդեցությունները բարբառային բառապաշարի վրա ենթադրել են տալիս, որ **Սյունիք-Արցախի բարբառախմբի լեզվական հիմքերը դրվել են հայերենի՝ որպես առանձին լեզվի ձևավորման ամենավաղ փուլերում՝ դեռևս նախագրային ժամանակաշրջանում:** Այս տվյալները վկայում են ոչ թե միասնական «ձևավորման կետի» առկայության, այլ **տարածաշրջանում լեզվի անընդհատ էվոլյուցիայի, նաև հնագույն լեզվական շերտերի կայուն պահպանության մասին**, ինչը պայմանավորված է եղել ինչպես ներլեզվական զարգացումներով, այնպես էլ աշխարհագրական մեկուսացվածության և էթնիկական շարունակականության գործոններով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. **Քումունց Մ.** Կրոնիկ և նախապաշարմունքին վերաբերող մի քանի բառերի քննություն (ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի տվյալների), «Բանբեր Երևանի համալսարանի» (Բանասիրություն), թիվ 2, 2022, էջ 89-96:
2. **Քումունց Մ.** Հականունության ձևավորման ածանցական միջոցները նույնարմատ և տարարմատ բառերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 3, 2019, էջ 183-197:
3. **Քումունց Մ. Ս.,** Բառաքնական-ստուգաբանական մի դիտարկում . գերմաստ-գիլիմաստրի-գետնախնձոր, «Լեզու և լեզվաբանություն», թիվ 1, 2019, էջ 65-71:
4. **Քումունց Մ.,** «Գորիս» տեղանվան ստուգաբանություն, Գիտական նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2016, էջ 378-396:
5. **Քումունց Մ.,** Ակսել Բակունցը և նոր գրական հայերենը (ըստ «Կարմրաքար» վեպի), Հայոց լեզուն անադարտ պահենք: Գիտաժողովի նյութեր, Երևան, «Արմավ», հրատ., 2019, էջ 115-132:
6. **Քումունց Մ.,** Անգ>(Ա)անգեղ (Nergal - 'Երբե՛ղ) «անգղ», բժիժ, պիծակ բառերի ստուգաբանություն, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», 2019, թիվ 2, էջ 138-146:

7. **Քումունց Մ.**, Անձկայք > Քարահունջ < Բոլորաքար (տեղագրական և ստուգաբանական փորձ), «Կովկասը՝ մեր ընդհանուր տուն», միջազգային գիտաժողովի նյութեր, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատ., 2017, էջ 403-408:
8. **Քումունց Մ.**, Արևելյան լեզուներից անցած փոխառությունների որակական և քանակական հատկանիշները (ըստ Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի), «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութեր, 2022, էջ 248-252:
9. **Քումունց Մ., Բաբայան Ա.**, Ածանցումը Գորիսի բարբառում, Բարբառագիտական ընթերցումներ. միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2024, էջ 201-228:
10. **Քումունց Մ., Բակունց Ա.**, Դարձվածքները Ա. Բակունցի «Կյորես» վիպակում (համեմատական քննություն), Բարբառագիտական ընթերցումներ. միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ. 2024, էջ 229-248:
11. **Քումունց Մ., Բաղդասարյան Մ.**, Կապի հնչյունական, բառային և քերականական դրսևորումները Գորիսի բարբառում: Բարբառագիտական ընթերցումներ. միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ. 2024, էջ 249-268:
12. **Քումունց Մ.**, Բարբառագիտական մի քանի եզրույթների և ըմբռնումների շուրջ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Պրակ Գ, Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիա, Երևան, Copy Print LLC հրատ., 2022, էջ 186-195:
13. **Քումունց Մ.**, Բուրդուր: Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի բարբառը Արևմտյան Անատոլիայում: «Հայրենագրկման և գոյաբանական պայքարի գաղափարն արևմտահայ գրականության մեջ» գիտաժողովի նյութեր, Ստեփանակերտ, Գ. Նարեկացու անվան համալսարան, 2022, էջ 57-70:
14. **Քումունց Մ.**, Գորիսի բարբառը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման համատեքստում, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիուսիսարևելյան միջբարբառախումբ» գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, 2022, էջ 252-269:
15. **Քումունց Մ.**, Գրաբարի անցյալ դերբայը բարբառային մի քանի բառերում. (ստուգաբանություններ), «Դպրատուն», թիվ 1 (7), 2019, էջ 81-89:
16. **Քումունց Մ.**, Երիցվանք-Արծվանիկ. ստուգաբանական փորձ, «Էջմիածին», թիվ 2 (Գ), 2023, էջ 84-96:

17. **Քումունց Մ., Ընդոյան Ջ.,** Արցախի Բերձոր գավառի պատմական Հարար գյուղը, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1, 2020, էջ 187-200:
18. **Քումունց Մ., Ընդոյան Ջ.,** Քարավազ (Խուդափերին). կամուրջը և պատմական տարածքը, ԱրԴՀ, «Գիտական ընթերցումներ», հոդվածների ժողովածու, 1, 2016, էջ 113-121:
19. **Քումունց Մ., Կյուփեր և Ըղվերձ** տեղանունների ստուգաբանության շուրջ, «Բանբեր հայագիտության», թիվ 1(13), 2017, էջ 127-138:
20. **Քումունց Մ.,** Կրկնավոր բարդությունների կազմման եղանակները Սյունիք-Արցախի բարբառային տարածքում, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ» գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտ, 2022, էջ 288-304:
21. **Քումունց Մ.,** Հայերենի «ուռչել» անվանումը Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում, «Լեզու և լեզվաբանություն», 2021, 1 (24), էջ 15-22:
22. **Քումունց Մ.,** Հին հայերենից Սյունիք-Արցախ բարբառախմբին անցած իրանական փոխառությունների ձևիմաստային նկարագիրը, «Կովկասյան տարածաշրջանի արդի հիմնախնդիրները. հնարավորություններ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Մեսրոպ Մաշտոց Համալսարան, 2022, էջ 67-70:
23. **Քումունց Մ.,** Հին հայերենյան շերտի բուսանունները Սյունիք - Արցախ բարբառային բառապաշարում, «Դպրատուն», թիվ 2 (8), 2019, էջ 76-82:
24. **Քումունց Մ.,** Հնագույն շերտի բառերը Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում («Հագուստ, անձնական զարդարանք և խնամք» բառիմաստային խմբի համեմատական քննություն), «Լեզու և խոսք» (2-րդ առցանց գիտաժողովի նյութեր) [առցանց], 2020: Հասանելի է՝ https://language.sci.am/sites/default/files/kowmownts_mher.pdf (դիտված է՝ 20.11.2020):
25. **Քումունց Մ.,** Հնդեվրոպական *gʷhisla- /ջիլ/ արմատի ընդհանրացումները հայերենում և թյուրքական լեզուներում, Հայ լեզվաբանության 11-րդ գիտաժողով՝ նվիրված Զոն Գրեպինի հիշատակին (1937-2016): Հիմնադրույթների ժողովածու, Երևան, «Ասողիկ» հրատ., 2017, էջ 87-88:
26. **Քումունց Մ.,** Հնդեվրոպական *k>*g' (կ>ծ) անցման իրողությունները հայերենում, Գորիսի պետական համալսարանի միջազգային II գիտաժողովի աշխատանքների ժողովածու, Գորիս, 2011, էջ 468-471:

27. **Քումունց Մ.**, Հնդեվրոպական շերտի բառերը Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում («Ուտելիք, ըմպելիք, կերակրի պատրաստում և ամանեղեն» բառիմաստային խումբ), «Ջահուկյանական ընթերցումներ», 2020, էջ 138-146:
28. **Քումունց Մ.**, Հնդեվրոպական շերտի բառերը Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում, «Դպրատուն», թիվ 1 (11), 2021, էջ 56-61:
29. **Քումունց Մ.**, Ձավար/հաճար բառերի հնդեվրոպական աղբյուրները՝ ըստ բարբառային տվյալների, «Գիտական տեղեկագիր» (Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան), թիվ 2, 2019, էջ 114-123:
30. **Քումունց Մ.**, Ղուկաս Սեբաստացու «Դավիթ Բեկ կամ պատմություն ղափանցոց»-ի տեղանվանական համակարգը, Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի, 2(10), 2022, էջ 93-106:
31. **Քումունց Մ., Մարգարյան Մ.**, Արևելյան լեզուներից անցած փոխառությունները Գորիսի բարբառում (ըստ Ս. Խանգադյանի «Մատյան եղելությանց» վիպակի), Բարբառագիտական ընթերցումներ. միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ. էջ 269-290:
32. **Քումունց Մ.**, Մի քանի տեղանունների ստուգաբանություն՝ պատմաազգագրական հենքով, Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրները (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, «Գիտություն» հրատ., 2019, էջ 210-224:
33. **Քումունց Մ., Ներսիսյան Լ.**, Կոռնիձոր-Խորեա առնչությունները (տեղագրական և բառաքնական փորձ), «Էջմիածին», թիվ ՀՁ (Ա), 2019, էջ 120-131:
34. **Քումունց Մ., Ներսիսյան Լ.**, Սյունիք-Արցախ բարբառային տարածքի ռազմական բնագավառի տերմինները Գորիսի բարբառում, «Բանբեր» Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 2017, 1(40), էջ 690-699:
35. **Քումունց Մ.**, Ոսկրի խորհրդապաշտությունը Ա. Բակունցի «Կարմրաքար» վեպում, «Գրականագիտական հանդես», թիվ 1, 2022, 330-343:
36. **Քումունց Մ.**, Պատմական Հաբանդ գավառի Սիրիջի բերդը, «Էջմիածին», թիվ 2, 2021, էջ 121-129:
37. **Քումունց Մ.**, Պատմական Սյունիքի Բաղք գավառի Շոռնոխ բնակավայրը (ստուգաբանության փորձ), «Էջմիածին», թիվ Ժ, 2021, էջ 50-66:
38. **Քումունց Մ.**, Ռուսերենից անցած փոխառությունների բառաիմաստային զարգացումները Սյունիք-Արցախ բարբառախմբի

բառապաշարում, Русистика в XXI веке: тенденции и направления развития, Международная научная конференция, Сборник статей, изд.-во ЕГУ, 2019, էջ 234-240:

39. **Քումունց Մ.**, Սյունիք-Արցախ բարբառային տարածքի մի քանի համանունների ուսումնասիրության շուրջ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Վ. Ա. Քոսյանի ծննդյան 90-ամյակին, Երևան, 2017, էջ 172-181:

40. **Քումունց Մ.**, Տարածական հարաբերություններ արտահայտող բարբառային մի քանի հնաբանությունների շուրջ, (Վիճահարույց ստուգաբանություններ, բնիկ և օտար բառային ընդհանրություններ կամ հանդիպադրումներ), «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», թիվ 1, 2021, էջ 14-21:

41. **Քումունց Մ.**, -ՏԻ || -ԴԻ ածանցով բարբառային մի քանի բառերի քննություն, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», թիվ 2, 2022, էջ 31-40:

42. **Քումունց Մ.**, Ֆիզիկական աշխարհ նշող գրաբարյան շերտի բառերը Սյունիք-Արցախ տարածքային բարբառներում, «Հայագիտություն. Սյունիք», թիվ 1, 2016, էջ 59-72:

43. **Rkoyan Z., Kumunts M.**, The historical and cultural heritage of the Nagorno-Karabakh conflict zone, Voskan Erevantsi, 2023, 264 p. (անգլերեն)

44. **Kumunts M., Margaryan I., Khachatryan H., Mkhitarian G., Gevorgyan G., Nersisyan L., Katvalyan V.**, The Historical Development of the Place Name in Armenian (Etymology of 'Harzhis' Sacred Area), "Forum for Linguistic Studies", 2024, vol. 6, (6), p. 43-53. DOI: 10.30564/fls.v6i6.7184. (անգլերեն)

45. **Kumunts M., Margaryan I., Miqayelyan S., Khachatryan V., Gevorgyan G., Khachatryan H., Grigoryan S., Nersisyan L.**, Indo-European Origins of Syunik-Artsakh Agricultural Terms, "Forum for Linguistic Studies", 2025, vol. 7 (5), p. 535-548. DOI: 10.30564/fls.v7i5.9112. (անգլերեն)

46. **Kumunts M., Margaryan I., Nersisyan L.**, Semantic and Formal Image of Concepts Related to "Sensory Perceptions" Preserved from the Indo-European Language in the Dialect Area, "Viesdom" vol. 25, no. 1, 2023, p. 189-202.

47. **Kumunts M., Khachatryan H., Simonyan N., Sukiasyan H., Falakyan M., Telyan L., Papikyan S., Mkrtumyan A., Khalatyan G., Arakelyan K., Baghramyan V.**, Comprehension of Historical PhBW's and Contemporary PhCF's in Armenian: Linguistic Analysis, Generational Differences, and Pedagogical Implications, Theory and Practice in Language Studies, vol. 16 (1), 2026, p. 1-16. DOI: <https://doi.org/10.17507/tpls.1601.01> (անգլերեն)

**КУМУНЦ МГЕР СУРЕНОВИЧ
АРЦАХСК-СЮНИКИЙ ДИАЛЕКТНЫЙ СЛОВАРНЫЙ СОСТАВ**

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук
по специальности 10.02.01 – «Армянский язык»
Защита состоится 06.03.2026 г. в 15:00 на заседании
специализированного совета КВОН РА 019 по специальности «Лингвистика»,
действующего в Институте языка им. Г. Ачаряна НАН РА.
Адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена всестороннему синхроническому и диахроническому исследованию исторического лексического пласта Сюник-Арцахского диалектного ареала. Исследование проводится с использованием историко-сравнительного метода, который раскрывает закономерности формо-смыслового проявления доармянского (индоевропейского), древнеармянского (грабарского) и заимствованного лексических пластов. Актуальность работы определяется пробелами в системном анализе лексики в армянской диалектологии, необходимостью переоценки исконно армянского фонда и острой проблемой сохранения арцахского диалектного наследия, документирование которого стало национально-культурным приоритетом.

Объектом исследования является лексика Сюник-Арцахского диалектного ареала, который, благодаря своему горному расположению и этнической преемственности, служил своеобразной «крепостью» для древнейших лексических пластов армянского языка. Предметом исследования являются языковые особенности его исторических лексических пластов, включая формо-смысловое развитие, словообразовательные особенности и функциональные проявления лексики.

Научная новизна диссертации заключается в первом обширном, систематическом и тематическом исследовании исторической лексики Сюник-Арцахской диалектной группы. Предложены уникальные решения по этимологии многочисленных слов, часть которых выполнена впервые, а другие являются корректировками или опровержениями ранее принятых взглядов (например, обоснование доармянского происхождения слов «աշըղ» [аджг], «ածիկ» [ацик], «կաճիկ» [кацан], «լամպա» [лампа], «սարսնգի» [сараснги], «սնդ» [сунду]). В научный оборот введен новый и богатый диалектный материал, ранее неисследованный или частично проанализированный, подкрепленный сравнительно-тематическими таблицами, статистическими таблицами и диаграммами.

Диссертация состоит из введения, двух глав и заключений. Во введении представлены актуальность, цель, задачи, объект, предмет, научная новизна и методология работы. Первая глава посвящена исследованию доармянского (индоевропейского) лексического пласта Сюник-Арцахского диалектного словаря, сгруппированного тематически. Вторая глава посвящена анализу древнеармянских (грабарских) лексических пластов, а также заимствований. Заключения суммируют основные результаты и положения исследования.

Основные выводы работы подтверждают, что диалекты Сюника-Арцаха являются одними из важнейших центров сохранения и восстановления доармянского (индоевропейского) лексического фонда армянского языка. Из 2085 лексических единиц индоевропейского происхождения, зафиксированных для общearмянского языка, 1317 (более 63%) засвидетельствованы в исследуемом ареале. Из 158 архаичных единиц в общearмянском языке, 127 (более 81%) используются в диалекте, что свидетельствует об исключительно консервативном характере диалектной среды. Роль Сюник-Арцахских диалектов имеет решающее значение для решения 151 из 292 спорных этимологических вопросов. Анализ тематических групп показал высокую степень сохранности лексики в фундаментальных бытовых и природных сферах (например, «Физический мир», «Части тела», «Земледелие»), что указывает на этническую и языковую преемственность региона с доармянских времен.

Диалекты представлены не как пассивные, а как активные и творчески переосмысливающие наследники грабара, проявляющие все основные типы семантических сдвигов (сужение, расширение, метафорическое развитие и обращение). В частеречном распределении лексики преобладают существительные (77.7%). В заимствованных пластах, составляющих 27.2% словарного состава, преобладает иранский элемент (19.8%), за которым следуют семитские (3.6%), кавказские (2.1%) и греческие (1.8%) влияния. Эти данные указывают на то, что языковые основы Сюник-Арцахской диалектной группы были заложены в самый ранний дописьменный период формирования армянского языка.

Теоретическая и практическая значимость диссертации высока; она вносит вклад в историю армянского языка, историческую лексикологию, диалектологию и сравнительное языкознание. Она также закладывает основу для будущих лексикографических, этнолингвистических, историко-культурных исследований и усилий по сохранению исчезающего языкового наследия.

KUMUNTS MHER SUREN
THE ARTSAKH-SYUNIK DIALECTAL VOCABULARY

Dissertation for the degree of Doctor of Philological Sciences
in the specialty 10.02.01 – "Armenian Language"

Defense will take place on 06.03.2026 at 15:00 at the session
of Specialized Council on Linguistics 019 HESC of RA in the
the Institute of Language after H. Acharyan NAS RA.

(address: 15 Grigor Lusavorich St. 0015 Yerevan)

SUMMARY

The dissertation is devoted to a comprehensive synchronous and diachronic study of the historical layers of the vocabulary of the Syunik-Artsakh dialect area. The research is carried out using the historical-comparative method, revealing the patterns of formal-semantic manifestation of the pre-Armenian (Indo-European), Old Armenian (Grabar), and borrowed lexical layers. The relevance of the work is determined by the gap in the systematic analysis of vocabulary in Armenian dialectology, the need for a re-evaluation of the native Armenian fund, and the urgent problem of preserving the Artsakh dialectal heritage, the documentation of which has become a national-cultural priority.

The object of the research is the vocabulary of the Syunik-Artsakh dialect area, which, due to its mountainous location and ethnic continuity, has served as a unique "fortress" for the oldest layers of the Armenian language. The subject of the research is the linguistic features of its historical vocabulary layers, including the formal-semantic developments, word-formation peculiarities, and functional manifestations of the vocabulary.

The scientific novelty of the dissertation lies in the first extensive, systematic, and thematic study of the historical vocabulary of the Syunik-Artsakh dialect group. Unique solutions for the etymology of numerous words are proposed, some of which are done for the first time, while others are corrections or refutations of previously accepted views (e.g., substantiation of the pre-Armenian origin of the words "աջըղ" [ajëgh], "ածիկ" [atsik], "կածաւն" [katsan], "լամփա" [lamp'a], "սարասընգի" [sarasëngi], "սունդն" [sündü]). New and rich dialectal material, previously unexamined or partially analyzed, is introduced into scientific circulation, reinforced by comparative-thematic tables, statistical tables, and diagrams.

The dissertation consists of an introduction, two chapters, and conclusions. The introduction presents the relevance, aims, objectives, object, subject, scientific novelty, and methodology of the work. The first chapter examines the pre-Armenian (Indo-European) layer of the Syunik-Artsakh dialectal vocabulary, grouped thematically. The second chapter is dedicated to the analysis of Old Armenian

(Grabar) lexical layers, as well as loanwords. The conclusions summarize the main research findings and provisions.

The main conclusions of the work confirm that the dialects of Syunik-Artsakh are among the most important centers for the preservation and restoration of the pre-Armenian (Indo-European) vocabulary fund of the Armenian language. Out of 2085 Indo-European derived lexical units recorded for common Armenian, 1317 (more than 63%) are attested in the studied area. Out of 158 archaic units in common Armenian, 127 (more than 81%) are used in the dialect, which testifies to the exceptional conservative nature of the dialectal environment. The role of the Syunik-Artsakh dialects is crucial for solving 151 out of 292 debatable etymological issues. The analysis of thematic groups has shown a high degree of preservation in fundamental everyday and natural spheres (e.g., "Physical World," "Body Parts," "Agriculture"), indicating the ethnic and linguistic continuity of the region since pre-Armenian times.

The dialects are presented not as passive, but as active and creatively reinterpreting inheritors of Grabar, manifesting all major types of semantic shifts (narrowing, expansion, metaphorical development, and reversal). In the word-class distribution of the vocabulary, nouns predominate (77.7%). In the borrowed layers, which constitute 27.2% of the vocabulary, the Iranian element predominates (19.8%), followed by Semitic (3.6%), Caucasian (2.1%), and Greek (1.8%) influences. These data indicate that the linguistic foundations of the Syunik-Artsakh dialect group were laid in the earliest pre-literary period of the formation of the Armenian language.

The theoretical and practical significance of the dissertation is high, contributing to the history of the Armenian language, historical lexicology, dialectology, and comparative linguistics. It also lays the groundwork for future lexicographical, ethnolinguistic, historical-cultural studies, and efforts to preserve endangered linguistic heritage.

